ԳՈՀԱՐ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ*

DOI:10.57155/DMWK6083

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՈԴԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Բանալի բառեր՝ *Վիրահայոց թեմ, Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունի, թեմական առաջնորդ, Հայաստանի ազգային արխիվ, Մատենադարանի արխիվ, Ալեքսանդր Երիցյանի արխիվային ֆոնդ, էջմիածնի Սինոդ, հայտարարություն, Կարին:*

Մուտք

Պետականության կորստից հետո հայ եկեղեցին և հոգևոր իշխանությունները կարևոր դեր են ունեցել ազգի պահպանման գործում: Ի մասնավորի, թեմական առաջնորդներն են լուծել իրենց համայնքներում ծառացած խնդիրները և նվիրումով պաշտպանել հայ ժողովրդի շահերը՝ իշխող երկրների ղեկավարությանը ներկայացնելով ազգին հուզող խնդիրները: Հայ եկեղեցու այդ երախտավորների շարքում հոգևոր և հասարակական գործունեությամբ առանձնանում է Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունին[1] (1779-1856):

---

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, կրտսեր գիտաշխատող, goga87gevorgyan@gmail.com, հոդվածը ստանալու օրը՝ 27 սեպտեմբերի, 2025, հոդվածը գրախոսելու օրը՝ 15 հոկտեմբերի, 2025:

1 Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունի, ավազանի անունը՝ Հովհաննես, ծնվել է 1779 թ. մայիսի 18-ին, Էրզրումի նահանգի Սպեր գավառի Հունուտ գյուղում: Այստեղից էլ հաճախ նրան անվանել են Կարապետ Հունուտցի: Սպեր գավառը վաղ միջնադարից հայտնի է եղել որպես Մամիկոնյան և Բագրատունի նախարարական տների ժառանգական կալվածք, որտեղից էլ Կարապետի գերդաստանն ընդունել է Բագրատունի ազգանունը, տե՛ս **Ա. Ա. Մելքոնյան,** «Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոս և Կարապետ արքեպիսկոպոս (կենսագրական զուգահեռներ)», *Էջմիածին*, 2006, Է-Ը, էջ 129-130: 1811 թ. Կարապետ վարդապետն Էջմիածնում Եփրեմ Ա. Ջորագեղցի կաթողիկոսից (1809-1830 թթ.) ձեռնադրվել է արքեպիսկոպոս և վերադարձել Էրզրում, տե՛ս **Ե. Ա. Լալայան,** *Երկեր*, հ. 1, Երևան, 1983, էջ 430-431: 1837 թ. Կարապետ արքեպիսկոպոսը Հովհաննես Կարբեցի կաթողիկոսի կողմից նշանակվել է Վրացա-իմերեթական հայոց թեմի առաջնորդ և գործել այդ պաշտոնում մինչև մահ: Մահացել է 1856 թ., Ախալցխայում:

Կարապետ արքեպիսկոպոսի գործունեության, Վիրահայոց թեմում[2] նրա իրականացրած բարեփոխումների և դրանց իրագործման ընթացքում առաջացած խիստ քննադատությունների, մեղադրանքների ու դժգոհությունների ուսումնասիրման համար հիմք են հանդիսացել Հայաստանի ազգային արխիվում[3] և Մաշտոցյան Մատենադարանի[4] արխիվի Ալեքսանդր Երիցյանի ֆոնդում պահպանվող Կարապետ արքեպիսկոպոսին վերաբերող մեծաքանակ վավերագրերը: Հրատարակության ենք պատրաստել Կարապետ արքեպիսկոպոսի բազմաբնույթ գործունեությունը ներկայացնող՝ երբևէ չհրապարակված ուշագրավ մի վավերագիր[5], որտեղ, ի հերքումն Էջմիածնի Սինոդի ավագ դատախազի պաշտոնակատար (պրոկուրոր) Ս. Մատինովի մեղադրանքների, Կարապետ արքեպիսկոպոսը ներկայացնում է իր նվիրյալ գործունեությունը հօգուտ հայ ժողովրդի և եկեղեցու:

Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու գործունեության նկարագիրն ըստ պատմագիտական ուսումնասիրությունների

Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու գործունեությանը վերաբերող կարծիքները տարբեր են և իրարարամերժ: Կան հեղինակներ, որոնք բարձր են գնահատում նրա գործունեությունը՝ ի նպաստ կարնոհայերի և ընդհանրապես, վիրահայ ժողովրդի: Որոշ հեղինակներ էլ խիստ քննադատաբար են վերաբերվում նրան՝ համարելով հայրենադավ և մեղսագործ: Հետաքրքրություն է ներ-

---

[2] Վիրահայոց թեմը, ենթադրաբար, հիմնվել է 12-րդ դարում: Ըստ պատմական բազում վկայությունների՝ նախքան թեմի հիմնվելը, դեռևս է դարում վիրահայ համայնքը ղեկավարել են հայ եպիսկոպոսներն ու քահանաները, հայերն ունեցել են իրենց եկեղեցիներն ու մատուռները: 13-րդ դարից սկսած առաջնորդանիստն է եղել Տփղիս (Թբիլիսի) քաղաքի Ս. Գևորգ եկեղեցին: Թեմական առաջնորդների մասին ամենահին հիշատակությունը վերաբերում է 12-րդ դարի 70-ական թվականներին: Հիշատակվում է Բասեղ (Բասիլիոս) արքեպիսկոպոսը, որը մասնակցել է 1178 թ. Հռոմկլայի եկեղեցական ժողովին: Վիրահայոց թեմի առաջնորդների շարքում եղել են նշանավոր հոգևորականներ, մտավորականներ, հասարակական, քաղաքական գործիչներ, օրինակ՝ Սարգիս Դ Վրաստանցին, Հովհաննես Ը Կարբեցին, Ներսես Ե Աշտարակեցին, Մակար Ա Թեղուտցին, Գևորգ Ե Սուրենյանցը, Գևորգ Զ Զորեֆչյանը, որոնք հետագայում օծվել են Ամենայն Հայոց Կաթողիկոս, Գարեգին Ա Հովսեփյանը՝ հետագայում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս: Վիրահայոց թեմի առաջնորդներ են եղել բանաստեղծ, մանկավարժ, հասարակական գործիչ Հարություն վարդապետ Ալամդարյանը, Ստեփանոս արքեպիսկոպոս Աղոթյանը, որի օրոք Թիֆլիսում կառուցվել է թեմի առաջնորդարանը: 1824 թ. Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին հիմնել է Ներսիսյան դպրոցը, որը նշանակալից դեր է ունեցել հայ կրթամշակութային ու հոգևոր կյանքում: Տե՛ս Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի պաշտոնական կայք, https://armenianchurch.ge/hy/ekegheciner-2/virahayoc-tem (Մուտք՝ 10. 11. 2024):

[3] Այսուհետ՝ ՀԱԱ:

[4] Այսուհետ՝ ՄՄ:

[5] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1470, թ. 32-39:

կայացնում պատմաբան Աշոտ Մելքոնյանի ուսումնասիրությունը[6], որտեղ նա զուգահեռներ է անցկացնում Կարապետ արքեպիսկոպոսի և Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսի (1843-1857 թթ.) գործունեության միջև[7]: Նման մի համեմատություն է անցկացրել նաև պատմաբան Յ. Գեղամյանցը: Զնույնացնելով Կարապետ արքեպիսկոպոսին Ներսես կաթողիկոսի հետ՝ նա կարևորել և խիստ ընդգծել է արքեպիսկոպոսի «մեծագործությունը և նշանավորությունը»[8]: Այնուհանդերձ, թե՛ դրական, և թե՛ բացասական ընկալումներով ուսումնասիրությունները ժամանակի վրացահիմերեթական հոգևոր, քաղաքական և հասարակական գործչի մասին անհամեմատ քիչ են և զիջում են Ներսես Աշտարակեցուն առնչվող ուսումնասիրություններին:

Որպես Կարնո թեմի առաջնորդի՝ Կարապետ արքեպիսկոպոսի առաջին ազգանպաստ գործը սովի ժամանակ կարոտյալներին սննդով ապահովելն էր, որի համար արժանացել է ժողովրդի բարձր գնահատանքին՝ ստանալով «խնամատար, գորովագութ հայր» անունները[9]: Կարինում տիրող սովից, աղքատությունից և ժանտախտից տառապող ժողովրդին մեծապես աջակցելու նպատակով արքեպիսկոպոսը մեծահարուստ որոշ անձանց միջոցներով բացել է աղքատանոց, «ուր 180 աղքատ սնունդ և հանդերձ էին ստանում, իսկ ուրիշ աղքատների նա այլուր, ցորեն և գարի էր բաժանում յուր կառավարիչ եղած ժամանակ սահմանած եկեղեցական շտեմարաններից»[10]: Կա վկայություն, որ կարնոհայերը և նույնիսկ մյուս քրիստոնյա ազգերը արքեպիսկոպոսի հետ խոսելիս «հայր սուրբ» էին անվանում, իսկ միմյանց հետ խոսելիս՝ «մեծավոր»: Մինչև այսօր էլ Ախալցխա քաղաքում ասում են՝ «մեծաւորի գերեզմանը»[11], «մեծաւորենց բաղնիքը», «մեծաւորենց գեղերը», «մեծաւորին տունը», «մեծաւորենց աղբիւրը»[12] և այլն:

Կարապետ արքեպիսկոպոսին հաջողվել է վերադարձնել Թուրք կառավարիչների հափշտակած մի շարք եկեղեցիների կալվածքներ, պարտքից ազատել Էրզրումի Ս. Աստվածածին եկեղեցին, վերանորոգել և բարեկարգել վնասված

---

6 **Ա. Ա. Մելքոնյան,** նշվ. աշխ., էջ 129-134:

7 Նույն տեղում, էջ 134:

8 **Յ. Հ. Գեղամեանց,** «Կարապետ արեպիսկոպոս (կենսագրություն)», *Փորձ*, Թիֆլիս, 1876, էջ 200:

9 **Վ. վարդապետ Գալամդարյան,** «Կարապետ արեպիսկոպոս Բագրատունի», *Էջմիածին*, 1956, N 11-12, էջ 92-96:

10 **Ե. Ա. Լալայան,** նշվ. աշխ. էջ 432:

11 Քաղաքային գերեզմանատունը հիմնվել և օծվել է Կարապետ արեպիսկոպոսի կողմից 1833 թ.: Նրա շիրմի վրա հետագայում կառուցվել է մատուռ, որն այսօր ուխտատեղի է դարձել կարնոհայերի համար:

12 **Յ. Հ. Գեղամեանց,** նշվ. աշխ., էջ 176:

վանքերը, ստեղծել «ազգային գանձանակ»[13], ուր ամեն օր արհեստավորներն ու վաճառականները գցում էին իրենց հասույթի տասներորդը, և դրանով իսկ օգնում աղքատներին, վճարում հարկերը: Կարնոհայերին, հոգևոր և աշխարհիկ պաշտոնյաներին ուղղված իր «օրհնութեան թղթի» մեջ արքեպիսկոպոսը գրում է. «Առ ի թեթևացուցանելոյ զպահանջս բազմատեսակ հարկաց, սահմանեցաք առ այն զազգային գանձանակ»[14]:

Իր ժողովրդի մեջ ծագած բոլոր տարաձայնություններն ու խնդիրները լուծում էր արքեպիսկոպոսը: Օսմանյան կառավարությունը կարնոհայերին վերաբերող բոլոր հարցերը՝ վճարվող հարկերից մինչև խստագույն օրենքներին ենթարկելու պահանջները, կարգավորում էր Կարապետ Բագրատունու միջոցով: Իր օրինակով նա փորձում էր ժողովրդի մեջ սերմանել աշխատասիրություն. «այդ իսկ պատճառով թէ՛ Էրզրումում, և թէ՛ Ախալցխայում, գեղացիներին միշտ պատուիրում էր, որ բացի տէրունական կիւրակէներից, ուրիշ կիւրակէներ չըպահեն»[15]:

Կարևորելով կրթության դերը ժողովրդի կյանքում՝ Կարապետ արքեպիսկոպոսը Կարինում հիմնում է Կարապետյան դպրոցը, որը կրթական և լուսավորչական մեծ դեր է խաղում կարնոհայերի կյանքում: Այն գործում էր եկեղեցու միջոցներով, և աղքատների երեխաների ուսումնառությունն անվճար էր: Հիշատակման արժանի է այն երևույթը, որ Կարինում դպրոց է հիմնվել այն ժամանակ, երբ ոչ թե հայկական, այլ անգամ թուրքական դպրոցներ չկային[16]: Ուշագրավ է, որ Կարապետ արքեպիսկոպոսը նույնիսկ աղքատ ընտանիքների ծնողներին ցորեն էր բաժանում, որպեսզի երեխաներին չզրկեն դպրոցից՝ արհեստի կամ այլ աշխատանքի տալու նպատակով[17]: Կան վկայություններ, որ տարեկան 40 աղքատ աշակերտ էր կերակրվում Կարապետ արքեպիսկոպոսի տանը, հագուստ և գրենական պիտույքներ ստանում[18]: Հատկանշական է, որ դպրոցում ուսումը պարտադիր դարձնելուն ուղղված արքեպիսկոպոսի մեծ ջանքերին Կարինի ժողովուրդն արձագանքում էր այնպես, իբր արքեպիսկոպոսը ցանկանում է քահանա և վարդապետ «շինել» բոլորին: Դպրոցում Կարապետ արքեպիսկոպոսի հրավերով դասավանդում էին Կոստանդնուպոլսից ժամանած երևելի հայագետներ (Հովհաննես վարժապետ, Շեքերճյան Գրիգոր պատվելի, Կարապետ վարժապետ Վանեցի, Գրիգոր Տեր-Հովհաննիսյան պատվելի, Գրիգոր Զմշկյան)[19]:

---

[13] **Ե. Ա. Լալայան,** նշվ. աշխ., էջ 432:
[14] **Յ. Հ. Գեղամեանց,** նշվ. աշխ., էջ 172:
[15] Նույն տեղում:
[16] **Յ. Հ. Գեղամեանց,** նշվ. աշխ., էջ 174:
[17] **Ե. Ա. Լալայան,** նշվ. աշխ., էջ 433:
[18] **Յ. Հ. Գեղամեանց,** նշվ. աշխ., էջ 175:
[19] **Վ. վարդապետ Գալամդարյան,** նշվ. աշխ., էջ 92-96:

Այս առումով կարևոր է Կարապետ արքեպիսկոպոսի հայտարարությունը Սինոդին այն մասին, որ հայկական հարուստ մշակույթը չկորցնելու համար անհրաժեշտ է ունենալ նախկինի նման գիտակ և բանիմաց մարդիկ: Այդ պատճառով էլ առաջարկում է մի շարք գավառներում բացել ծխական դպրոցներ, որոնց համար եկեղեցիները պետք է վճարեին տարեկան որոշակի գումար[20]: Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ արքեպիսկոպոսի ջանքերով կարնոհայերի գաղթից հետո Կարապետյան դպրոցի նմանությամբ դպրոց է հիմնվում նաև Ախալցխայում՝ նոր Կարապետյան վարժարան[21] և Ախալքալաքում՝ Մեսրոպյան արական դպրոց[22] անվանումներով:

1837 թ. նշանակվելով Վիրահայոց թեմի առաջնորդ՝ Կարապետ արքեպիսկոպոսը Ախալցխայից տեղափոխվում է Թիֆլիս[23]: Թեմում շրջագայելու ընթացքում թեմական առաջնորդը տեսնում է ժողովրդի և հատկապես, հոգևորականների տգիտությունը: Ուստի, առաջարկում է Ներսիսյան դպրոցից բացի հոգևոր ուսումնարաններ հիմնել Ախալցխա, Ելիզավետպոլ, Սղնախ և Գորի քաղաքներում, որտեղ պիտի սովորեին տեղի հոգևորականների զավակները: «Վասն որոյ առ ի առաջս առնուլ այսոցիկ չարեաց խնդրեմ ի Սիւնհոդոսէդ առնել զտնօրէնութիւն, զի գոնէ ի վիճակին Վրաստանի, բաց ի դպրոցէն Տփխիսայ, լիցին և չորս ուսումնարանք, յորս աւանդեսցին դպրութիւն հայ և ռուս լեզուաց ընդ նշանակեալ նոցա առարկայից»[24]:

Կարապետ արքեպիսկոպոսի գործունեությունը և՛ դրական, և՛ բացասական կողմերից գնահատվել է ռուս-թուրքական պատերազմի (1828-1829 թթ.) և դրա հետևանքով իրականացված կարնոհայերի գաղթի (1829-1830 թթ.) շրջանում: Ուսումնասիրողներն արտահայտել են իրարամերժ կարծիքներ. ոմանք Կարապետ արքեպիսկոպոսին համարում են հայրենադավ գաղթի առաջնորդ՝ մեղադրելով Կարինը հայաթափելու, հայ ժողովրդին իր պատմական հայրենիքից տեղահանելու և ռուսական քարոզչության ծրագիրը հաջողեցնելու մեջ: «Հազա-

---

20 ՄՄ, ԿԴ, թղթպ. 104, վավ. 7, թ. 1:

21 Հիմնվել է 1842 թ. Ախալցխայում, Կարապետ արքեպիսկոպոսի կարգադրությամբ և նրա անունով կոչվել Կարապետյան դպրոց: Ախալցխայի Կարապետյան դպրոցը Թիֆլիսի Ներսիսյան դպրոցից հետո երկրորդն էր Կովկասում և ներգաղթած կարնոհայերի համար կրթության և մշակութային կարևոր կենտրոն էր հանդիսանում: Այն մեծ դեր է խաղացել Ախալցխայի հասարակական և մշակութային կյանքում: Հայտնի է, որ հետագայում, Սումիաս վարդապետ Պարզյանցի հրավերով, դպրոցում դասավանդել են Խաչատուր Աբովյանի որդին՝ Վարդան Աբովյանը, Ղազարոս Աղայանը, Գևորգ Բարխուդարյանը, տե՛ս **Ս. Գ.Կարապետյան,** *Ախալցխա*, Երևան, 2008, էջ 106:

22 Երկդասյա հոգևոր դպրոցը հիմնվել է 1836 թ. Ախալքալաքում, Կարապետ արքեպիսկոպոսի ջանքերով: Այն գործել է Ախալքալաքի Ս. Խաչ եկեղեցու գավթում:

23 ՀԱԱ, ֆ. 56, ց.1, գ. 39, թ. 31: Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 56, ց.1, գ. 27, թ. 1:

24 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 420, թ. 46:

ռամյակներով բնօրրանին կառչած և միայն վերջին՝ շուրջ երեք դարերի ընթացքում օսմանահպատակ դարձած հայերի մի մասին իրենց պատմական հայրենիքից տեղահանելու և հոծ զանգվածներով գաղթեցնելու համար անհրաժեշտ էր գտնել անփառունակ այդ գործը ստանձնող քիչ թե շատ հեղինակավոր այնպիսի անձ կամ անձեր, որոնք քարոզչական լուրջ և ծավալուն աշխատանքով ի զորու լինեին գաղթի տրամադրություն և հակվածություն սերմանել ժողովրդի լայն զանգվածների շրջանում: Ցավալիորեն պատմության այս հոլովույթում ևս գտնվեց եսականությանը գերի այն մեկը, որը մի յուրօրինակ «Շահ Աբաս» դարձավ հարազատ հոտի գլխին»[25]: Իսկ Ալեքսանդր Երիցյանն իր աշխատության մեջ փաստում է. «Մեծ ջանք գործ դրեց Կարնոյ առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսը, որ յետաձգուի Ճանապարհորդութիւնը մինչև գարունք, որպէս զի ժողովուրդը ժամանակ ունենայ կարգի բերել իւր գործերը, վերջացնել հաշիւները և ծախել իւր կալուածները կամ աւելորդ գոյքը: Այնուամենայնիւ, շատերը չլսեցին արհւոյն և նոյն իսկ ձմեռ ժամանակ շտապեցին դէպի ռուսաց սահմանը»[26]:

Հընթացս հանդիպում ենք կարծիքների, թե մեծ գաղթի նախապատրաստության ընթացքում Կարապետ արքեպիսկոպոսը ոչ թե հավաքել, այլ, ըստ էության, թալանել է Կարնո վանքերն ու եկեղեցիները՝ չգաղթող հայերին ոչինչ չթողնելով[27]: Հարկ է նշել, որ գաղթի ժամանակ արքեպիսկոպոսի ջանքերով Կարին քաղաքի և նահանգի գյուղերի եկեղեցիներից ու վանքերից հավաքվել և Ախալցխա են տեղափոխվել հոգևոր և մշակութային մեծ արժեք ներկայացնող եկեղեցական սպասք, անոթներ, մասունքներ, ձեռագրեր, ավետարաններ, գրքեր, որոնք պահվել են Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցում[28]: Արքեպիսկոպոսը Կարինից բերած հարստությամբ երկար ժամանակ ապահովել է գաղթականների դրությունը[29]:

---

25 **Ս. Գ. Կարապետյան,** *Ախալցխա*, Երևան, 2008, էջ 49:

26 **Ա. Դ. Երիցյան,** *Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք 19-րդ դարում*, Թիֆլիս, 1894, էջ 438:

27 **Ս. Գ. Կարապետյան,** նշվ. աշխ., էջ 52:

28 **Մ. Ղ. Դարբինյան,** «Հայոց եկեղեցու մեծ երախտավորը», *Էջմիածին,* 1979, ԼՁ/Դ, էջ 46:

29 **Շ. Սիմոն**, «Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունի», *Էջմիածին*, 1956, ԺԳ/3, էջ 47:

Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու գործունեության քննությունն ըստ Հայաստանի Ազգային արխիվում և Մաշտոցյան Մատենադարանի արխիվում պահպանվող վավերագրերի

Իր բոլոր նախաձեռնությունների իրագործման ճանապարհին Կարապետ արքեպիսկոպոսը հանդիպել է խոչընդոտների: Հովհաննես Ը Կարբեցի կաթողիկոսի (1831-1842 թթ.) Կարապետ արքեպիսկոպոսին ուղղված «Խորհուրդ»[30] և դրան ի պատասխան արքեպիսկոպոսի 1839 թ. նամակներից[31] տեղեկանում ենք, որ Թիֆլիս քաղաքի որոշ հոգևորականներ՝ Ղազար քահանա Սահառունին, Հովհաննես Էլմիրզյանցը և Եգոր Բաշբեուքյանցը, զրպարտիչ ելույթներ են ունեցել արքեպիսկոպոսի, նրա կառավարության և հարազատների դեմ: Պատասխան նամակում թեմական առաջնորդը խնդրում է կաթողիկոսին անաչառ քննություն անցկացնել և նման չարագործությունների դեմն առնել: Ապա, 1843 թ. Ս. Մատինովը Կարապետ արքեպիսկոպոսի դեմ մեղադրանքների և անօրինական արարքների մի շարք է ներկայացնում Սինոդին՝ պահանջելով քննիչ հանձնաժողով ուղարկել արքեպիսկոպոսի գործը քննելու համար[32]: Սակայն, 1844 թ. ռուսական իշխանությունների հրամանով գործը կասեցվում է մինչև Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի ժամանումը: 1847 թ. կաթողիկոսի պահանջով Էջմիածնի Սինոդը հատուկ հանձնաժողով է կազմում՝ Վրաստանի և Իմերեթի թեմի կոնսիստորիայում մանրակրկիտ ստուգումներ անցկացնելու նպատակով: 1848 թ. Կարապետ արքեպիսկոպոսը ևս մեկ ծավալուն բացատրագիր է ուղարկում կաթողիկոսին՝ ներկայացնելով իր գործունեությունը սկզբից մինչև վերջ, բոլոր մեղադրանքներին տալով հիմնավոր պատասխաններ[33]: Տևական քննություններից հետո, ի վերջո, ապացուցվում է Կարապետ արքեպիսկոպոսի անմեղությունը, և Ներսես կաթողիկոսը փոխում է իր վերաբերմունքը նրա հանդեպ՝ փորձելով վերականգնել երբեմնի լավ հարաբերությունները[34]:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև Ս. Մատինովի 1843 թ. նամակը Կարապետ արքեպիսկոպոսին, որտեղ նշում է, որ վերջինս իզուր է նեղացել իրենից Սինոդին ներկայացրած մեղադրանքների համար, քանի որ ինքը պարտավոր էր այդ անել: Ընդգծում է նաև, որ իր հեղինակությունը կախված չէ Կարապետ արքեպիսկոպոսի խոսքերից, քանի որ հոգևորականներն են կախման մեջ գտնվում իրենից, այլ ոչ հակառակը[35]:

---

30 ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթպ. 148, վավ. 176, թ. 1:

31 ՀԱԱ, ֆ. 332, ց.1, գ. 607, թ. 1:

32 ՄՄ, ԿԴ, թղթպ. 104, վավ. 8, թ. 1-8: Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1470, վավ. 8, թ. 1-11:

33 ՀԱԱ, ֆ. 56, ց. 2, գ. 486, թ. 1-44:

34 **Ա. Ա. Մելքոնյան,** «Ներսես Աշտարակեցի կաթողիկոս և Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունի (կենսագրական զուգահեռներ)», Երևան, 2011, էջ 365-366:

35 ՄՄ, ԿԴ, թղթպ. 104, վավ. 45, թ. 1:

1837 թ. ռուսաց Նիկոլայ I կայսեր (1825–1855 թթ.) և Հովհաննես Կարբեցի կաթողիկոսի ընտրությամբ նշանակվելով Վրաստանի և Իմերեթի թեմի առաջնորդ՝ Կարապետ արքեպիսկոպոսը նույն տարում բացում է Վիճակային կոնսիստորիա[36]: Կա ուսումնասիրություն, ըստ որի Վրաստանի և Իմերեթի թեմի կոնսիստորիայի տարեկան «մտից» գրությունների թիվը 19-րդ դարի 30-ական թթ. մոտ 121 էր, իսկ նույն դարի 40-ական թթ.՝ 2318, իսկ 90-ական թթ. հատում էր 6000-ի սահմանը[37]: Սա պատկերացում է տալիս Կարապետ արքեպիսկոպոսի օրոք թեմի կոնսիստորիայի գործունեության ծավալների մասին:

Ուշագրավ է, որ Հովհաննես Կարբեցի կաթողիկոսը, Կարապետ արքեպիսկոպոսին ուղղած գրության մեջ դժգոհելով նրա սպասավոր Գևորգ վարդապետի ծառայությունից, նշում է, որ ինքը վստահ է վերջինիս անվայել արարքների մասին արքեպիսկոպոսի անտեղյակ լինելուց, քանի որ քաջ ծանոթ է նրա ջերմեռանդ գործունեությանը, անբիծ վարքին, անխոնջ աշխատանքին և գնահատում է եկեղեցուն տված նրա օգուտը[38]:

Հատկանշական է, որ Եփրեմ Ա Ջորագեղցի կաթողիկոսը (1809-1830 թթ.), Կ. Պոլսի ու Ս. Երուսաղեմի պատրիարքները Կարապետ արքեպիսկոսպոսին ուղղած կոնդակներում շնորհակալություն են հայտնում այն նվիրատվությունների համար, որոնք նա հավաքել է «յօգուտ նոյն վանքերի և սովատանջ հայերի զանազան ժամանակներում և զանազան դէպքերում»[39]:

Պետք է նշել, որ պատահական չէ Կարապետ արքեպիսկոպոսի գործունեությանն առնչվող վերոնշյալ բոլոր հարցերի ուսումնասիրումն ու առաջադրումը, քանի որ այդ հարցերն են տեղ գտել Էջմիածնի Սինոդին ուղղված սույն հայտարարության մեջ՝ որպես իրեն ուղղված մեղադրանքների պատասխաններ:

---

36 Հին Հռոմում կոնսիստորիա է անվանվել կայսերը կից գործող գաղտնի խորհուրդը (լատ. consistorium – համատեղ կանգնած): Ռուսական եկեղեցու թեմերում թեմական առաջնորդներին կից առաջին կոնսիսիտորիաները բացվել են 18-րդ դ., Հայոց եկեղեցու թեմերում՝ սինոդային կառավարմանն անցնելուց հետո: Էջմիածնի սինոդի գործունեության շրջանում կոնսիստորիան թեմական կառավարման կենտրոնական վարչական մարմինն էր, որ գոյություն ունեցավ մինչև սինոդի փակվելը, տե՛ս **Վ.Կ. Գրիգորյան,** «Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի կոնսիստորիան (19-րդ. 30-ական թթ. – 20-րդ դ. առաջին տասնամյակ)», *ԼՀԳ*, 2019, 3(657), էջ 53:

37 **Վ. Կ. Գրիգորյան,** նշվ. աշխ., էջ 56:

38 ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթպ. 148, վավ. 176, թ. 1:

39 **Յ. Հ. Գեղամեանց,** նշվ. աշխ., էջ 188:

Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու՝ էջմիածնի Սինոդին ուղղած հայտարարությունը

Վրաստանի հայոց թեմական Կարապետ արքեպիսկոպոսն իր առաջնորդության տարիներին (1837-1856 թթ.), չնայած իր ազգանվեր գործունեությանը, բախվել է թշնամական վերաբերմունքի, որի դրսևորումներն արտահայտված են իր՝ Սինոդին գրած հայտարարության մեջ:

Վավերագրում արտացոլված է ավագ դատախազ Ս. Մատինովից Կարապետ արքեպիսկոպոսին ուղղված մեղադրանքների շրջանակը, որոնց հիմնական մասը վերաբերում է եկեղեցական կարգը խախտելու, դրամական չարաշահումների, ապօրինի ամուսնությունների թույլտվության, առանց բարձրագույն հոգևոր իշխանության իմացության քահանաներ ձեռնադրելու, տեղափոխություններ իրականացնելու և այլ հարցերի: Հատկանշական է, որ արքեպիսկոպոսն այն որակում է «երգիծաբանութիւն՝ լցեալ ստութեամբ սեփական»[40] կետ առ կետ պատասխանելով այդ բոլոր մեղադրանքներին:

Վավերագրի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում խոսել հոգևոր մի գործչի մասին, որն իր առաջնորդության 20 տարիների ընթացքում էապես բարեփոխել է վիրահայ ժողովրդի հոգևոր, տնտեսական, հասարակական և հատկապես, կրթամշակութային կյանքը՝ ամուր հարաբերություններ ձևավորելով նաև Վրաստանի և Ռուսաստանի պետական և հոգևոր իշխանությունների հետ: Սույն փաստաթղթում արծարծվող դեպքերն ու անցքերը լավագույն նկարագիրն են տալիս այդ ժամանակաշրջանի հայ հոգևոր կյանքի ու գործունեության և տիրող երկրների հետ հարաբերությունների մասին:

Մենք պարզել ենք, որ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու՝ Ս. էջմիածնի Սինոդին ուղղված հայտարարության բնագիրը (Ա)[41] գտնվում է ՀԱԱ-ում, իսկ ընդօրինակությունը (Բ)[42] ՄՄ Ալեքսանդր Երիցյանի արխիվային ֆոնդում: Վերջինս աչքի է ընկնում մի շարք արժեքավոր վավերագրերի պարունակությամբ, որոնց մեծ մասն արխիվաբանական տեսանկյունից սկզբնաղբյուրային քննության համար կարևոր նշանակություն ունեցող ընդօրինակություններ են: Սույն փաստաթուղթն այդ վավերագրերի շարքին է դասվում: Ուստի, հաշվի առնելով Ալեքսանդր Երիցյանի արխիվային ֆոնդի արժեքն ու նշանակությունը, իրականացվել է երկու վավերագրերի բնագրային համեմատություն, տողատակերում նշվել են դրանց միջև եղած տարընթերցումները:

---

40 ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթպ. 147, վավ. 39, թ.1:
41 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1470, թ. 32-39:
42 ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթպ. 147, վավ. 39, թ. 1-9:

ԲՆԱԳԻՐ

Ի լուսաւորչեան Հայոց Սիւնեաց էջմիածնի, ի վիճակաւոր Կարապետ արքեպիսկոպոսէ հայոց Վրաստանի և գաղթելոց ի Տայս:

Յայտարարութիւն

Ես գտի շնորհս[43] (ստանալ)[44] ստանալ զհրամանագիր Սիւնեաց ի 18էն դեկտեմբերի 1843 ամի № 2474, յորում եդեալ էր ամբաստանութիւն զինէն արարեալ ի Մատինովէն կատարողէ զպարտաւորութիւն պրոկուրորի և մատուցեալ ի նմանէ Սիւնեաց ի 16 հոկտեմբերի[45] № 133:

Սաստիկս վշտացայ ընթունելով զայդ ամբաստանութիւն, զոր արժան է կոչել երգիծաբանութիւն[46] լցեալ ստութեամբ սեփական ևեթ որոմնացանութեան: Ակամայ խոովեցաւ[47] անձն իմ, ի հայհոյանաց օտարացելոց յամենայն բարեմասնութիւնէ: Ես ոչ գիտացի, թէ ընդ որ առաւել ունիմ զարմանալ ընդ ժպրհութիւն կեղծուպատիր բարուրանաց պրն Մատինովին, թէ ընդ յանդգնութիւն նորա, որ անպատշաճ է յոյժ այնմ սրբազան դասու, ուր նա պրն Մատինեանցն արժանացեալ է մտանել: Խոստովանիմ, թէ ոչ փոքր զարմացայ և ընդ այն, զի այդ թուղթ, ուր ես վիճակաւոր արքեպիսկոպոսս կոչեցեալ եմ ամենակերպ ցաւեցուցիչ անուամբք, և երջանկայիշատակ Հայրապետն ցուցեալ է պաշտպան ինձ, յայդոսիկ շարագործութիւնս ընկալեալ է ի յարգանս և մտեալ ի գործ յայնմ տեղւոջ, ուր պարտին բնականալ միայն բարեպաշտութիւն և քրիստոնէական[48] հեզութիւն, որ հեռի է ամենայն խոովութիւնից: Առ վերջինն ի յանցուցելոց ոչ համարձակի յարիլ վշտացուցիչ կոչումն ինչ, որ պատճառեսցէ զանպատուութիւն, մինչև ոչ կշտամբեսցին յանցանք նորա դատաստանական օրինօք, իսկ ես յաստիճանի իմում մատնեմ եղեալ յայտնի անսանձ թշնամանաց և թէ յումմէ արդեօք, ի պրն Մատինովէն:

Բայց ունելով օրինակ զվարդապետն մեր զտէր Յիսուս Քրիստոս, որ կրեաց զնախատինս թշնամանաց հեզութեամբ յամբարշտաց, ես հանգոյն նմա հանդարտեցայց հոգւով և ջանացից ամենայն հանդգնութեանց պրն Մատինովայ առնել պատասխանի ըստ պատշաճի կոչման իմոյ, բայց ոչ կարեմ և ոչ պարտիմ լսել զայնմանէ, զի նա Մատինեանցն անդուստ ի Թիֆլիզայ տարաւ ի Սիւնեաց[49] զթշնամութիւն առ իս: Աղբիւր թշնամութեանդ

---

43 Բ շնորհ
44 Ա բառը կրկնված է:
45 Բ հոգտեմբերի
46 Բ երգիծանութիւն
47 Բ խրովեցաւ
48 Բ քրիստոնէական
49 Բ Սիւնեաց

այնման անմաքուր է, որման և նոքա յորոց առեալ նա բամբասէ զինէն, այդ թշնամութիւն էր յատուկ հետևանք առաջադրութեանց Մատինովին զյարգելոց յինէն, որ ըստ իսկութեան իւրեանց լինին ի ծածուկ առանց գիտելոց արտաքին արանց: Զորմէ ես մասամբ ծանուցի ծայրագոյն կառավարչին[50] Վրաստանի ի յարակցական թղթի[51] իմում, ի 5ն հոկտեմբերի, № 227: Բայց բացայայտեցիցզամենայն յայնժամ, յորժամ բարուբան Աստուծոյ արժանացայց առնել տեսութիւն ընդ սրբազնասուրբ հայրապետին, զքնութիւն սրտից մերոց առաջի առնելով ատենին Քրիստոսի՝ Փրկչին մերոյ:

Զբացատրութիւնս իմ ես մեկնեցիցամենայն մտերմութեամբ հանդէպ իւրաքանչիւր մեղադրանաց պրն Մատինովայ այսու հետևեալ կարգաւ:

Առ 1ն: Յաղագս անկարգութեանց վիճակիս հասելոց ի բարձրագոյն աստիճան և չունելոյ իմ զհոգ բարեկարգել զեկեղեցիս: Յընթացս բազմամեայ ծառայութեան իմոյ ի կոչումն արքեպիսկոպոսութեան յերկրին Օսմանեանց և ի Ռուսաստան, ամենայն գործուղութիւնք իմ լեալ են իսկական հաստատուն նախանձաւորութեան, որով ես հոգամ անխոնջապէս[52] ըստ չափու կարողութեան[53] իմոյ զբարեկարգութիւնք եկեղեցեաց, և զբարեբարոյութիւնք հոգևորականաց: Այս ապացուցանի ի պարգևաց, զոր ես ընկալեալ եմ ի սրբազան հայրապետաց, ի նորին իսկ կայսերական[54] մեծութիւնք, և եթէ ես չունէի[55] զհոգ բարեկարգութեան եկեղեցեաց, ապա ո՞ արդեօք հիմնեաց և հասոյց ի ծաղկեալ վիճակ զհոգևոր ուսումնարանն Կարնոյ, ո՞ կառոյց զեկեղեցիս վիճակին և տարածեաց ի մէջ հոգևորականաց զուսումն, և ի սիրտս նոցա տպաւորեաց զերկիւղ Տեառն, հոգ տանելով իմ յայսմ, ես ըստ օրինակի Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, շրջապատեալ գոլով, ի բոնաւորակերպ կառաւարութիւնք, որք լի են միշտ ատելութեամբ քրիստոնէական[56] կրօնի, մօռացայ[57] զվտանգ[58] անձին և պատրաստ ի զոհել զկեանս իմ, խորհէի[59] միայն զբարօրութիւնք հօտին իմոյ, ոչ ապահէն այսոհիկ վաստակք և հոգատարութիւն իմ գրաւեցին առ իս զսիրտս բոլոր հայոց, որք ի 1829 ամի միահորհուրդ և միաձայն ըստ յորդորանաց իմոց թողեալ զհայրենիս իւրեանց

[50] Բ կառաւարչին
[51] Բ թխթի
[52] Բ անխօնջապէս
[53] Բ կարողութեան
[54] Բ նորին կայսերկան
[55] Բ չունէյի
[56] Բ քրիստօնէական
[57] Բ մօռաջայ
[58] Բ զվտանկ
[59] Բ խորհէյի

մտին ի հպատակութիւն տէրութեան Ռուսաց: Զէ՞ արդեօք և այս ստոյգ ապացոյց ջերմեռանդն ծառայութեան իմոյ, որ ձգեաց յիս զշնորհս օգոստափառ կայսեր մերոյ՝ արժանի առնելով զիս համարուել ընդ ասպետութեան սրբոյն Աննայի առաջին կարգի: Զկնի գաղթելոյ ընդ բոլոր հօտի իմոյ յԱխլցխայ, ոչ հայեցեալ յանտանելի կորուստս և ի հարստահարութիւնս իմ և ժողովրդեան, որք կից են ընդ գաղթականութեան, ո՛չ ապահէն, ի նմին իսկ ամի կառուցի զեկեղեցի և բացի զժողովրդական ուսումնարան, որ ցայսօր ժամանակի կրթէ և մարզէ ի ծառայութիւն եկեղեցւոյ և ի պէտս ազգի զանձինս արժանաւորս և բարեբարոյս ի պաշտօն հոգևորականութեան և աշխարհականութեան, ո՛չ ապահէն մի միայն ըստ իմում միջնորդութեան բացեալ եղև անդէն նահանգական ուսումնարանն, ո՛չ ապահէն ես կառուցի ի նոր քաղաքի զարքեպիսկոպոսարանն, զեկեղեցին յանուն Ամենափրկչի և զծխական եկեղեցիս ի գիւղօրայս աւելի քան զվաթսուն և ո՞ արդեօք շնորհեաց յիւրումն սեպհականութիւնէ[60] զանշարժ կալուածս գնեալս ըստ բաձրագոյն բարեհաճութեան: Ահա զայս ամենայն ես արարի շնորհօք ամենազօրին Աստուծոյ, և այս ամեն թուի, թէ կարեն լինիլ յայտնի ապացոյց հոգացողութեան իմոյ զբարեկարգութիւնէ եկեղեցեաց և այլոց: Վերջապէս զկնի մտանելոյ ի վիճակս Վրաստանի՝ ես յամենայն յարմար դէպս աշխատեալ եմ արմատախիլ առնել զանկարգութիւնս յեկեղեցեաց և մուծանել զճիշտ բարեպաշտութիւն ի մեջ սրբազնագործ և ստորին եկեղեցականաց: Ուստի և հոգալով զնոցանէ զի լիցին նոքա արժանի կոչման իւրեանց՝ ես յամենայն ժամանակս կառաւարութեան վիճակիս ձեռնադրեցի միայն ի Թիֆլիզ զերկուս քահանայս արժանաւորս և ընդունակս այնմ, և եղէ անընմիջական[61] պատճառ չափաւորելոյ աստէն զաւելորդ թիւ քահանայից ըստ մեծի մասին անբարեբարոյից: Ես և ոչ այլոք կարաց միմիայն ի ձեռն անընդհատ հոգացողութեան ըստ յայտնի Սիւնհոդոսին սակաւաձեռն միջոցաց պահպանել զհոգևոր հեմարանն, ուր մարզին այժմ բաւոք կրթութեամբ անձինք պատրաստեալք ի ծառայութիւն եկեղեցւոյ և նորին կայսերական[62] մեծութեան, իմով իսկ աշխատութեամբ բացեալ եղև կամ լաւ ևս ասել յարեաւ ի մեռելութիւնէ տպարանն հեմարանին հայոց, որ բոլորովին խանգարեալ[63] էր, ի ժամանակս ժողովոյն յաղագս բարեկարգութեան նոյն ուսումնարանի, որոյ մի ի ներգործական անդամոց էր նոյնիսկ Մատինովն, որ այժմ ցուցանէ զանձն ջերմեռանդ և հոգացող բա-

---

60 Բ սեփհականութիւնէ
61 Բ անընդմիջական
62 Բ կայսերական
63 Բ խանկարգեալ

ռեկարգութեան կառավարեալ[64] յինէն վիճակի: Բայց թէպետ ստիպեալ եմ ստորագրել զօգտակար գործողութիւնս իմ միմիայն ի հերքումն որոմնացանութեան, ես բարւոք համարիմ դադարիլ զի մի կոչեսցեն զիս անձնագով, թէպետ վաստակք իմ և պտուղ վաստակոցդ ակներև տեսանին, ի նոյնիսկ գործս և ի ցուցակի ծառայութիւն իմոյ, որ գտանի ի դիւանի Սիւնհոդոսին, այսոքիկ վկայութիւնք բաւական են պաշտպանել զիս ի բամբասանաց, եթէ կամք իցեն միտ դնել նոցին խաղցրութեամբ, նոյնպէս և առ այն, թէ յատուկ է մարդոյ, որ զամենայն կեանս իւր վարեալ է ի խնամատարութիւն բարութեան հօտին, ի հասակի իմում և յաստիճանի այնպիսի գործք, որք բարդեալ են յիմ վերայ յամբաստանութեան Մատինովի:

Առ 2ն: Ձայնմանէ, թէ ի բոլոր վիճակին թոյլատրին այնպիսի պսակք, որք ածեն զժողովուրդն ի գայթակղութիւն:

Իսկապէս կարեմ ասել, թէ զգուշութիւնն ի կատարիլ պսակաց ունի հիմն զհաստատուն կանոնս, որք կարեն զառաջս առնուլ ամենայն օրէնս ընդդէմ[65] առիթից յայսպիսի դէպս: Ըստ տեղեկութեանց հասելոց ի վիճակային ատեանն, թէ ոմանք ի քահանայից ըստ անհոգութեան կէսք անմտադրութեամբ կամ շարամտութեամբ և ի պակասութիւնէ բաւական տեղեկութեանց կատարեն զպսակս, որոց կանոնաւորութիւնն ենթարկի կասկածանաց: Նա (կոնսիստորիայն[66]) ըստ օրագրութեան ի 26ն մայիսի 1841 ամի, արարեալ է զտնօրէնութիւն, զի ծխատէր քահանայք, ի ներկայացուցանելն ի կոնսիստորիայն, ի հոգևոր կառաւարութիւնս և առ գործակատարս զփեսայացուն, ի նոյնիսկ ժամու ընդ յայտարարութիւն իւրեանց առաջի արասցեն և զվկայական տուեալ յ 12 անձանց, վասն չլինելոյ ի մէջ պսակելեացն որպէսզի և իցէ արգելանաց և ոչ այլ ազգ, բայց եթէ ըստ այսոցիկ վկայագրոց տուեալ լինին հրամանագիրք պսակելոյ յօրինադրեալ աւուրս, զայս տնօրէնութիւն կոնսիստորիին Սիւնհոդոսն եգիտ այնչափ իրաւացի, զի ի ձեռնարկութիւն և միւս ատենից հրամայեաց զայն որպէս էր և ի հրամանէ Սիւնհոդոսիդ ի 26 յուլիսի 1841 ամի N 1441: Բայց եթէ յետ այսորիկ ուրուրէք յայսմ ընդարձակ վիճակի պատահին զանցառութիւնք և շարամտութիւնք, ուրեմն այսպիսիք չիք և ոչ մի: Կանոնք, իսկ օրինաց վասն զառաջս ունելոյ յանցաւորութիւնց և պատիժն վասն նոցա, ապացուցանեն, թէ զանցառութիւնք և շարամտութիւնք մարթէն լինիլ: Այլ յայսմանէ ևս չէ մարթ հանել զեզրակացութիւն, թէ շարութիւնն հասեալ է ի ծայրագոյն վիճակ[67], որպէս ասէ պարոն Մատինովն, դնելով յապա-

[64] Բ կառաւարեալ
[65] Բ ընդ ընդէմ
[66] Բ կօնսիստորն
[67] Բ աստիճան

ցոյց զերկուս կամ զերիս ապօրինի պսակս ի մէջ հազարաց, բայց և այնոքիկ են ապօրինիք ըստ նորա կարծեաց, միայն հիմնեալ ի վերայ անմաքուր աղբերաց[68] որպէս տեսցի ի ներքոյ: Վիճակային իշխանութիւնն յայնժամ մեղադրելի համարեսցի, եթէ ինքնին թոյլ տայ զապօրինի պսակս կամ ի լսելն զայնցանէ, ոչ հետամուտ լինի արգելմանց այնոցիկ, եթէ ցանկութիւն Մատինովին էր միայն պահպանել զկարգ ի վիճակին Վրաստանի և ոչ յատկապէս ամբաստանել զինէն շարժեալ ի կրից ատելութեան, իհարկէ ի լսելն զանկարգութիւնէ իրիք պարտէր հասուցանել, ի լսելիս վիճակային իշխանութեանն և խնդրել զտնօրենութիւն այնորիկ, ուղղելոյ զայն և խրատելոյ զպատճառն անկարգութեան, այսպէս վարեն և այսպէս առնեն միշտ բարեմիտ պրօկուրորք տէրութեան:

Առ 3ն: Ի կողմանէ պսակաց, կատարելոց յարգելեալ աւուրս ու հրամայելոց պսակել զաղջկունս չև հասեալս ի չափ:

Յարգելեալ աւուրս չեն կատարեալ պսակք ի վիճակին Վրաստանի և պարոն Մատինովն յամենայն գիտս[69] իւր, ո՛չ բերէ և ո՛չ զմի ապացոյց այնպիսի պսակաց, իսկ առ ի խոյս տալ ի կատարելոյ պսակաց ընդ անչափահաս աղջկանց, եղեալ են կանոնք կարելիք, զնոցանէ գրեալ է յ2 յօդուածի, նմանապէս և զայնմանէ, թէ ոչինչ կանոնք չեն բաւական առնուլ զառաջս յանցաւորութեանց միշտ և յամենուրեք, մանաւանդ աստ ի մասին պսակաց ընդ անչափահասից[70], քանզի այսոքիկ պսակք ի Վրաստանի եղեալ են սովորականք, զի ամուսնացուցանէին տակաւին ի 11 ամեայ հասակին: Այս յայտնի է ամենեցուն, և այս սովորութիւն կարճեցաւ աստէն ոչ վաղագոյն քան զամս 13, ըստ առանձին հրամանի և մինչ ցայնժամ էր այս անտանելի և համարիւր սովորական գործ, առ ի բնաջինջ առնել զամենայն սովորութիւնս, որչափ և վնասակարք իցեն, հարկաւոր են սահմանել ժամանակք: Ես այս կատարեսցի ըստ մեծի մասին ոչ այլ ազգ: Բայց եթէ զկնի քանի մի տասնեակ ամաց ևս և ողջոյն սերնդոց: Ես զայս ասելով ոչ մտաբերիմ արդարացուցանել զանիրաւութիւն, այլ զայն կամիմ ասել միայն[71], թէ սուտ գրէ Մատինովն, թէ յինէն արգելեալ պսակք անչափահասից ոչ թէ լինին ի գայթակղութիւն ժողովրդոցն[72], այլ միշտ ի հանոյս նոցա, բայց ես գիտելով զօրէնս որք ոչ թոյլ տան այսպիսի պսակաց, արգելեալ եմ[73] միշտ զայնպիսիս և նոյ-

---

68 Բ յաղբերաց
69 Բ գիտս
70 Բ անչափահաս աղջկանց
71 Բ միմիայն
72 Բ ժողովրդականացն
73 Բ արձակեմ

նիսկ օրէնք բազմիցս տեղի տան սովորութեան: Առ որ բերեմ օրինակ զայս սահման, ուր բազում սովորութիւնք և արդ ևս ունին զզօրութիւն օրինաց, որք տակաւին չեն ածեալ ի կատար, բայց յամենայնդէպս բացարձակ ասեմ, թէ հակառակ կարծեաց պարոն Մատինովի, որպէսզի և իցէ սովորութիւն չկարին լինիլ գայթակղութիւն, վասն զի այն յառաջացեալ է ի նոյն իսկ ժողովրդոց, յորս է և համաձայնի մտաց նոցա:

Առ 4ն: Ի կողմանէ պատարագելոյն ի մեծի պահս բացեալ վարագուրաւ, որում բերէ պարոն Մատինովն օրինակ զպատարագն մատուցեալ ի 20ն մարտի ի թաղման ուրումն հարուստ դերձիկի[74], զոր ես ըստ բանից Մատինովայ յուղարկաւորեցի ց գերեզմանն:

Ես ոչ ումէք չեմ հրամայեալ մատուցանել զպատարագ ի մեծի պահս բացեալ վարագուրաւ, իսկ յաւուր թաղման դերձիկ Մկրտումի, ես մատուցի զպատարագն բացեալ վարագուրաւ ոչ ի 20ն, այլ ի 24ն մարտի ցայս ի տօնի Լուսաւորչին մերոյ և բացումն վարագուրին եղև ոչ ի պատճառս հանգուցելոյն, այլ ի յարգանս տօնին ըստ մերս տօնացուցի: Ես ոչ համարիմ անպատշաճ յուղարկաւորել ցգերեզման զամենայն ննջեցեալս, բայց զդի դերձիկին չեմ յուղարկաւորեալ, առնել ինձ զայն ոչ թոյլ տայր վաստակաբեկութիւնն, որ կից է իմում հասակի, յընդ[75] երկար ժամերգութիւնէ: Երբ ես պատարագեմ ի թաղման ննջեցելոց, յայնժամ ոչ երբէք յուղարկաւորեմ անդր քան զգաւիթ եկեղեցւոյն, այլ եթէ այլ ոք պատարագեսցէ, յայնժամ ըստ թախանձանաց երբեմն յուղարկաւորեմ ընդ սակաւ ինչ տեղի հեռի յեկեղեցւոյն: Եւ արդեօք գործ էր պարոն Մատինովի դատել զնման օրինակ առարկայից և դատապարտել զայսպիսի գործողութիւնս իմ, որք համաձայն են կանոնաց Աւետարանի: Ինքն Քրիստոս ոչ մեղ անձին վարկաւ ուտել ընդ մաքսաւորաց, ես աշակերտ նորա կարեմ արդեօք բացառել ում և իցէ կատարել զքրիստոնէական[76] պէտս, թէև նա իցէ ի յետին ռամկաց:

Առ 5ն: Զվարուց և զբարուց սրբազնագործ և ստորին եկեղեցականաց:

Որպէս Սիմեհոդոսն, նոյնպէս և վիճակային իշխանութիւնն ի կիր արկանեն զամենայն չափու եղանակս կախեալս զինքեանց առ ի ուղղել զարբազնագործ և զստորին եկեղեցականս, ըստ հասեալ ի նոցանէ բողոքանաց, ոմանք ի նոցանէ արդէն պատժեալ են, և վասն ոմանց շարունակի քննութիւն որպէս և յայտնի է Սիմեհոդոսիդ: Այլ այսպիսի դէպք ըստ համեմատութեան ընդարձակ վիճակիս կարի սակաւ են, իսկ այլոց եկեղեցականաց մարթ է

74 Բ դերձկի
75 Բ ընդ
76 Բ զքրիստոնէական

տանել ըստ այժմեան միջոցաց կրթութեան հոգևորականաց և կեցութեան նոցա, և ոմանք են արժանաւորք գովութեան ըստ կոչման իւրեանց կենցաղաւարութեամբ, ընդունակութեամբ և կատարմամբ պարտաւորութեանց: Չէր պարտ դատել զամենայն սին և զիւրաքանչիւրսն, որպէս առնէ պարոն Մատինովն առանց լսելոյ և վերազննելոյ զայն, յորս նոքա դատին: Կարծեմ թէ ընդդէմ է խղճի մտաց բարեպաշտ քրիստոնէի վասն երկուց կամ երից յանցաւորաց վատաբանել զբոլոր հոգևորականութիւնն ողջոյն վիճակին: Պարոն Մատինովն մեղադիր լինի վիճակային իշխանութեան վասն բարուց հոգևորականացն, իսկ ինքն յամենայնդէպս պաշտպան է ցուցեալ զանձն վատթարագունիցն, ի նոցանէ միայն թէ բողոքաւոր լիցին նոքա զվիճակային իշխանութիւնէն:

Առ 6ն: Զթողլոյ իմ զեկեղեցիս ու զեկեղեցական անօթս յանպատշաճ դրութեան:

Յորոց արդեօք աղբերաց յառաջ բերէ պարոն Մատինովն զայսպիսի մեղադրանս՝ ի լինիլն իւր ի Թիֆլիզ, ի տարւոջ մի անգամ հազիւ մտանէր նա յեկեղեցի, իսկ զկնի գնալոյն յէջմիածին, իսպառ չէ եղեալ յեկեղեցիս մեր: Նա ինքն իսկ ունէր զարմանալ ընդ անշրջանկատութիւն բանից իւրոց, եթէ դարձուցանէր զակն, քանզի տեսանէր ի նոսա և ի զգեստս նոցա զպատշաճաւորն մարութիւն: Գուցէ պարոն Մատինովն կամ անձն ի վերայ բանից, որոց նա հիմնեալ է ցանկան տեսանել յեկեղեցիս մեր զայն բարելքութիւն, որք ոչ համապատասխանեն միջոցաց և այս ցանկութիւն ոչ կարէ դնիլ ի մեղադրանս վիճակային իշխանութեան, որ պարտի համեմատել զծախսն ոչ ըստ ցանկութեան իւրաքանչիւրոց, այլ ըստ կարողութեան: Այսպէս առնեմ ես և արարից:

Առ 7ն: Զհնոտի և զզգուելի զգեստուց քահանայից, որք նոյնիսկ զգեստուք պատարագեն:

Այս մեղադրութիւն բաւականապէս ցրի 5 և 6 յօդուածովք, իսկ վասն զզուելի զգեստուց, որովք իբրու թէ մատուցանեն քահանայք զպատարագ, խօսիլ[77] ինչ անդէպ համարիմ: Եթէ պարոն Մատինովն բարիս զզուելի իմանայ զցնցոտի հանդերձս, այն չկարէ խոչընդոտն լինիլ մարութեան խղճի մտաց և օրինաւոր կատարման իւրեանց պարտաւորութեան: Նմանապէս և շքեղութիւն զգեստուց ոչ մարեսցէ զհոգին ի գարշութիւնէ շաղախելոյ մօլութիւնք, առ աղքատս պարտ է լինիլ ներողամիտ[78], երբ աղքատութիւն նոցա յառաջ գայ ի հանգամանաց, յորոց նողոպրել զանձինս ոչ զօրեն և աստէն

[77] Բ խոսիլ
[78] Բ ներողամիտ

են բազում ժողովուրդ, որոց արդիւնք հազիւհազ բաւ են դարմանել զարբազնագործ և զեկեղեցական պաշտօնեայս: Եթէ բանք Մատինովին, ի վերայ հնոտի հանդերձիցն հոգևորականաց վերահային առ քահանայս աղքատ գիւղօրէից, դժուարին է յոյժ ևս և անիրաւացի, իսկ ի կողմանէ առաջնորդաց ստիպել զաղքատ քահանայսն ի յայտնի զրկանս գերդաստանաց նոցա պատրաստել զգեղեցիկ հանդերձս ի հաճոյս պարոն Մատինովի, իսկ եթէ բանք նորայ են զքահանայիցն Թիֆլիզ քաղաքի, սուտ են ամենևին, զի մին ի մօլութեանց այնոցիկ քահանայից է պենասիրութիւն նոցա ընդդէմ կոչման և կարողութեան իւրաքանչիւրոցն:

Առ 8ն: Վասն աշխատութեան իմոյ զի քահանայք զերկուս մասունս արդեանց առաջի արասցեն ինձ կցել ընդ եկեղեցական արդեանց:

Ջանալ բազմացուցանել զարդիւնս եկեղեցւոյ և պահպանել զնոսա ի շահասիրութիւնէ, է իսկական պաշտոն[79] իմ, թուի թէ պարոն Մատինովն խօսի զայնմ առարկայէ, որոյ գործն գտանի ի Սիւնհոդոսիդ և եթէ նա քննեալ էր զայն, յայն ժամ պարզաբար տէսանէր, թէ ոմանք ի քահանայից Տփխիսայ գրգռեալ ի քահանայիցն Սահակայ Սահառունոյ և Ղազարու Դաւթեան ցանկան սեպհականել ինքեանց զմի ի վաղեմնի աղբերաց արդեանց եկեղեցւոյ զհիմնեալն, ի վերայ կանօնաց հայրապետաց, և այն իսկ է, որ կոչի տէրունի: Զայս արդիւնս առանց ընդդիմութեան ներկայացուցանէին քահանայք ցամն 1841 ամի, բայց յայսմ ժամանակէ աշխատ լինին նոքա զանազան հնարիք սեփհականել զայն ինքեանց, իսկ ես աշխատ լինիմ, չթողուլ զնոյն առնել և թուի թէ բացի պարոն Մատինովայ ոչ ոք լինի ինձ մեղադիր վասն հոգացողութեան զօգտէ եկեղեցւոյ: Զարմանք այս են զի մին ի յատուկ և գլխաւորագոյն պարտաւորութեանց պրոկուրօրին, է պահել և պաշտպանել զօգուտն եկեղեցական, իսկ պարոն Մատինովն հակառակ պարտաւորութեան կոչման իւրոյ, ինձ ևս մեղադիր լինի յայնոսիկ, զի թոյլ ոչ տամ քահանայից յափշտակել զպատկանեալ վիճակի արդիւնս:

Առ 9ն: Վասն տեղափոխելոյ զմասունս սրբոց յեկեղեցւոյ յեկեղեցի:

Եւ ոչ զմի մասունս սրբոց ես չեմ տեղափոխեալ ի միոյ եկեղեցւոյ ի միւսն, միմիայն գրագրութիւն սկսաւ ի կօնսիստորիին, 1841 ամի, վասն տեղափոխելոյ ժամանակաւորապէս զմասունս սրբոյն Գէորգայ յեկեղեցւոյն կաթուղիկեի յեկեղեցին Հրեշտակապետի, յատկապէս վասն օգտի շինութեան նոյն Հրեշտակապետ եկեղեցւոյ, այս գրագրութիւն գտանի ի վերազնութեան նոյնիսկ Սիւնհոդոսիդ, որ վճռեալ է նոյնպէս զյիշեալ մասունսն թողուլ ի կաթուղիկէ եկեղեցւոջ իբրև սեպհականութիւն այնորիկ: Հանգամանքն

[79] Բ պաշտօն

զորս առաջի արարեալ է պարոն Մատինովն զայսմ գործոյ չտան նմա զյարգ, աղմուկ ժողովրդոց, արգելումն տեղափոխութեան մասանցն, գնահատութիւն նոցա ընդ աւագ քահանային Յարութիւնի, զարմացումն թուրքաց, ամենեքեան այդոքիկ են կեղծեալ առասպելք յանդգնականք առ սրբութիւնս և աններելիք առն կրթելոյ:

Առ 10[ն]: Յաղագս ինքնակամ և անխնայ ի կիրարկանելոց զարդիւնս եկեղեցական:

Ժողովք ի մէջ եկեղեցեաց լինին, ի ձեռն կարգապահին եկեղեցեաց Տփխիսայ յաւագ քահանայից և յերիցփոխանաց իւրաքանչիւր եկեղեցեաց և բաժանին ի մէջ աղքատաց, ի ձեռն նոյնիսկ կարգապահին և ծանուցական թուղթն ստորագրեալք ի ստացողացն պահպանին ամբողջ, եթէ պարոն Մատինովն չէր ըմբռնեալ ի ծարաւու չարախօսութեան, ապա իհարկէ ոչ երբեք ձեռն մին էր գրել զիս թաքուցանօղ կամաւոր գրոց ժողովրդոց յօգուտ աղքատաց, կոչումն իմ յորում հասի ես, յան բամբասկեան կարողութիւնն[80], զոր ես ունիմ շնորհիւ Տեառն[81], օգնութիւնն, զոր ցուցանեմ ես աղքատաց, ստիպեն զամօթ հարկանիլ յայդչափ անհնարին անպատուութեանց, որ ետ ինձ զանհրաժարելի հարկ արդարացուցանել զիս ընդդէմ այսչափ մերկաբան ստութեանց:

Առ 11[ն]: Վասն տեղափոխելոյ զքահանայս ի միոյ տեղւոյ յայլ տեղի առանց իրիք պատճառի:

Զայսպիսի արդեօք ունի հիմն պարոն Մատինովն, թէ ես առանց հարկաւորութեան տեղափոխել եմ զքահանայս և չգիտեմ պարտիմ ես արդեօք տալ նմա զհաշիւ ամենայն անցեալ ու ներկայ գործոց իմոց, ուր էառ այդ իրաւունք պարոն Մատինովի, բայց իրաւունք իմ ի տեղափոխել զքահանայս պարունակի ի կոչման արքեպիսկոպոսութեանս, և ց 1841 ամն ոչ ոք եղև ինձ առ այն արգելարիթ, և ոչ ումեք տայի ես զհաշիւ, բաց յԱստծոյ: Զկնի կազմելոյ շտատին յաղագս տեղափոխեալ քահանայից և զպատճառաց նոցին յայտնեալ եմ Սիւնհոդոսիդ յիւրում ժամանակի: Պ. Մատինովն տակաւին չգիտէ զիսկական պարտաւորութիւն թէմական առաջնորդի ի հոգևորական մասին, ի բազում դէպս նաև ի տեղափոխութիւն քահանայից գոն պատճառք, որ պարտին յայտնի լինիլ վիճակաւոր առաջնորդին և պատրիարգին և ոչ այլ ումեք: Արդարև դժուարին է առնել զինչ ի հաճոյս պարոն Մատինովին, որ հայի յիրս ոչ աչամբ անաչառ դատաւորի, այլ միայն դիտաւորութեամբ անգոսնելոյ զամենայն ներգործութիւնս իմ անխտիր ըստ ամենայնի,

---

80 Բ կարողութիւնն

81 Բ Տէրն

ֆանզի նա ինքն ամբաստան լինի զվարուց և զբարուց հոգևորականաց[82] թեմին Վրաստանի՝ վերաբերելով զայն իմումս անհոգութեան, զիարդ ուրեմն հնար իցէ ինձ ուղղել զվարս անուղիղ հոգևորականաց ոմանց, եթէ բարձցի յինեն և իշխանութիւնն տեղափոխելոյ զվատթար ֆահանայս ի հարստագոյն ծխոց յանհարուստս, և զառաքինագոյնս[83] ի նոցանէ յանհարուստ ծխոց ի հարստագոյնս, ի սանձ և ի զուսպ[84] առաջնոցն և ի խրախոյս և ի ֆաջալերութիւն վերջնոցն, միթէ ոչ պահպանի այս կարգ և ի նոյն ինքն ի մարմնաւոր իշխանութիւնն տեղափոխելով զքաղաքական աստիճանաւորս ըստ բնաւորութեանց և ընդունակութեանց իւրաքանչիւրոցն ինոցանէ, կարգս այս առաւել կարևոր համարի ի հոգևոր պաշտամունս նկատմամբ առաջնորդին ըստ ինչ-ինչ ամենահարկաւոր պատճառանաց, որոց ոչ կարէ ծանօթ լինել պարոն Մատինովն՝ ըստ կարի սահմանափակ գոլոյն գիտութեանց նորա կարգին հոգևորական պաշտօնատարութեան:

Առ 12ն: Վասն հարստահարելոյ իմ զֆահանայս՝ խլելով զհարուստ ծուխս նոցա և յանձնելով այլոց:

Ես ոչ երբէք չեմ խլեալ ի ֆահանայից ոչ զհարուստ և ոչ զաղքատ ժողովուրդս: Ստուգիւն օրինակաց յառաջ բերելոց ի Մատինովայ ապացուցանին ի ստորև յիւրում տեղւոջ, բայց այնուամենայնիւ թէև արարեալ իսկ իցեմ այս չլինէր արտաքոյ սահմանի իշխանութեան իմում, և պատճառք առ այն պարտին յայտնի լինիլ ինձ միայն և ի կարևոր դէպս սրբազնագոյն կաթուղիկոսութիւնն ըստ նոյնիսկ հոգևորական մասին՝ որպէս յիշեցաւ ի վերոյ ի 11դ յօդուածի:

Առ 13ն: Յաղագս առաջարկելոյ ի ձեռնադրութիւն զանգրագէտս:

Ըստ կանոնաց մերս եկեղեցւոյ, ըստ իրաւանց տուելոց վիճակաւոր առաջնորդաց և ըստ զօրութեան 58, 59 և 104 յօդուածոց բարձրագոյն կամօք հաստատեալ կարգադրութեան յաղագս կառաւարութեան գործոց հայոց եկեղեցւոյ ի Ռուսաստան, վիճակաւոր առաջնորդք ոչ պարտաւորին ի մասին ձեռնադրելոյ զանձինս, որք ունին առ այն զիրաւունս մատչիլ առաջարկութեամբ ի Սիւնհոդոսն տնօրէնութիւնն արարեալ, ի Սիւնհոդոսէն ըստ այսմ առարկայի յիշատակեալն ի հրամանի նորին յ31ն հոգտեմբերի 1841 ամի հազիւ կարէ փոխել զվերտառեալ կանոնս և զկարգադրութիւնս առանց բարձրագոյն վճռահատութեան: Ձայսմանէ ես դիմեցի առաջարկութեամբ առ պարոն գլխաւոր կառաւարիչն Վրաստանի և նորին բարձր գերազանցու-

[82] Բ հոգևորական
[83] Բ զարաքինագոյնս
[84] Բ ի ցաւոց

թիւնն եթող զայս առարկայ ցգալ սրբազնասուրբ հայրապետին, բայց առաջարկեալին յինէն ի վերջնում նուագի վասն ձեռնադրելոյ ի զանազան աստիճանս էին արժանաւորք և ընդունակք այնմ, բայց վճռահատութիւն ձեռնադրելոյ եղև ստացեալ վասն այնոցիկ միայն որք ի լինիլն աստ պ. Մատինովի գտին զդէպս հաճոյանալոյ նմա իհարկէ ըստ առանձին պատճառանաց վասն յարժանաւորութեան նոցա: Այնորիկ իսկ անձինք, որք եղեն անարժանք հաստատութեամբ Սիմեոնոսին, միմիայն ըստ կամաց պ. Մատինովի, որ չէգիտ ժամանակ ի գործ դնելոյ զմիջոցս վերահասու լինելոյ ընդունակութեանց նոցա եղեն հարցաքննեալք, ի գալն աստ անդամոց Սիմեոնոսին վասն ընդառաջ գնալոյ կաթուղիկոսին, ի բարձր սրբազան արքեպիսկոպոսացն, ի Յովսէփայ և ի Ղուկասու և երևեցան արժանաւորք, ուստի և նոքային յառաջարկեցին զնոցանէ, ի Սիմեոնոսն, ի 14 սեպտեմբերի, 1843 ամի, № 70:

Առ 14ն: Յաղագս տալոյ իմ քահանայից զպարգևս:

Այդ ճշմարիտ է, բայց ես և այլ թէմական արքեպիսկոպոսունք միշտ առնէաք զայդ, իսկ վասն իրաւանց իմոց առ այդ արդէն ես յայտնեալ եմ Սիմեոնոսիդ և Սիմեոնոսդ զվճիռ այդորիկ եթող ցգալուստ կաթուղիկոսին, որում սպասեմք:

Առ 15ն: Յաղագս արգելլոյ[85] քահանայից կրել զշլապայս:

Խորթութիւն այսր մեղադրանաց պատասխանւոյ անգամ չէ արժանի, բայց ես անկեղծաբար ասեմ, թէ ոչ երբէք և ոչ ումէք չեմ արգելեալ ծածկել զշլապայս:

Առ 16ն: Վասն պատարագելոյ ի Մեծի պահս:

Առ այս պատասխանեալ եմ ի յօդուած 4ն:

Առ 17ն: Վասն տեղափոխելոյ զմասունս, ի միոյ եկեղեցւոյ յայլ եկեղեցի:

Արդէն պատասխանեալ եմ ի յօդուածն 9ն:

Առ 18ն:

Յաղագս անիրաւաբար ի բաց կացուցանելոյ զՄիրիմանովն յերիցփոխանութիւնէ ի 1839 ամի:

Աստիճանաւոր Միրօ Միրիմանեանցն արձակեալ է ի պաշտօնէ երիցփոխանութեան ի 1834 և ոչ ի 1839 ամի որպես գրէ Մատինովն՝ հնարելով զամենայն կարևոր կեղծիս, ի մեղադրել զիս զկնի Միրիմանովայ եմուտ յայս պաշտօն Մեսրոպովն և զկնի նորա Մովսէսն Միրիմանեանց, որ և կառաւարեաց զեկեղեցին ց 1838 ամն և յայսմ ժամանակի արձակեցաւ ընդ խնդրոյ

---

[85] Բ արգելելոյ

ժողովրդոց ըստ եզրակացութեան կօնսիստորիին համաձայն օրինաց, և թէ-պետ Մովսէսն Միրիմանեանց արար զստապատիր ամբաստանութիւնս, բայց Սիւնհոդոսն ընկալեալ ի կոնսիսիտորէն զցրումն գանկատանաց նորա, յայտնեաց զիւրն համաձայնութիւն առ վճիռ կօնսիստորիային որպէս երևի ի հրամանէ Սիւնհոդոսիդ յ30ի յունիսի 1839 ամի №870: Եթէ պ. Մատինովն շարժեալ լինէր ի ցանկութիւնէ միայն յարուցանելոյ զկարգ իբրու թէ յանկարգ վիճակին Վրաստանի, և ոչ բնաւ ի կրից ատելութիւն նորա առ իս, արդարև իսկութեամբ տեղեկանայր կանխաւ հանգամանաց գործոյս այսորիկ ի գրագրութեանց Սիւնհոդոսին և ոչ բնաւ թոյլ տայր անձին առաքել առ ծայրագոյն իշխանութիւնն, զայնպիսի անհիմն և սուտ ամբաստանութիւնս դիտաւորութեամբ միայն անգոսնելոյ առաջի մեծաւորաց զիս զհոգևոր առաջնորդն իւր:

Առ 19ն: Յաղագս հալածանաց կրելոց յինէն Բաղդասար աւագ քահանայի:

Բարք ու բնութիւն այսր աւագ քահանայի յայտնի են ամենեցուն ևս առաւել այժմեան կաթուղիկոսին, յորմէ պատժեալ է նա արժանապէս ըստ իւրոց գործոց, և պաշտօն գործակատարութեան յանձնեալ էր ոչ այսմ աւագ քահանայի այլ ///ական եղբօր նորա: Գործք յաղագս արարեալ յանցանաց նորա մինչ ի յայտ գալն ամենողորմած Մանիֆէստի վերջացեալ են զօրութեամբ Մանիֆէստի և մնացեալքն շարունակին, իսկ վախճանական վճիռ այսոցիկ գործոց որպէս ինձ թուի մնան գալստեան վեհափառ հայրապետին, որ լիակատար իշխանութեամբ իւրով որոշեսցէ զվիճակ այսր անարժան հովուի, ոչ հայեցեալ յայն թէ նա կարաց գտանել զայնպիսի հզօր պաշտպանութիւն, որպիսին է Մատինովին: Վատահամբաւութիւնք[86] յիշեալ Բաղդասարն աւագ քահանայի քաջ յայտնի են և նորին վեհափառութեան, որ զկնի կրելոց ի նմանէ զբազում նախատինս և զպատիժս, տակաւին մնաց և մնայ ցայսօր ժամանակի անուղիղ և որ առաւել զարմանալին է իւրովք վատթարութեամբք գտանէ զպաշտպանս իւրոցն վատթարութեանց:

Առ 20ն: Յաղագս սպասելոյ եկեղեցական զպաշտամանս յեկեղեցիս Գօրւոյ:

Արդարև ի վիճակին Գօրվոյ գոյ զգալի կարօտութիւն հոգևորականաց, սակայն ոչ այնչափ որպէս գրէ պարոն Մատինովն, որպիսում պակասութեան նա ինքն է պատճառ, ըստ որում ոմանք յառաջարկելոցն յինէն վասն ձեռնադրութեան և ոչ հաստատելոց ըստ կամաց Մատինովի էին վասն եկեղեցեաց Գօրւոյ:

86 Բ Վատահամբաւորութիւնք

Առ 21ն: Յաղագս պսակելոյ զաներորդին Թադէոս աւագ քահանայի յաստիճանի մերձաւորութեան[87] և յաղագս կատարելոյ զանթոյլատրելի պսակս յայլ տեղիս:

Յաղագս զգուշութեանց պահպանելոց վասն չհաս պսակաց բացայայտեալ է յ2ոդ յօդուածին և թէ զկնի այնորիկ ուրևիցէ թոյլատրեալ են երկբայական պսակք առանց վճռոց Սիւնհոդոսին, է անստոյգ, և յաղագս պսակի զորմէ յիշէ աստանօր Մատինովն, ի գործս վիճակիս չիք տեղեկութիւն: Վասն որոյ և վիճակային իշխանութիւնն ոչինչ կարէր առնել ըստ այնմ անտեղեակ գոլով հանգամանաց գործոյն, իսկ այժմ տեղեկացեալ այնմիկ յամբաստանութիւնէ, աստի պարոն Մատինովին արարի զտնօրէնութիւն ինելոյ զայն և յիւրում ժամանակի յայտնեցից Սիւնհոդոսին:

Առ 22ն: Յաղագս տալոյ զայգին վանաց եկեղեցւոյ և զտուն ճեմարանին ի վարձու առանց վաճառախոսութեան:

Եւ զայս ևս սուտ ասէ պարոն Մատինովն: Այգին տուեալ է Մէլիքովին յետ վերջին վաճառախոսութեան 65 մանեթ արծաթոյ, այնու դաշամբ, զի նա զամենայն հարկաւորեալ ծախս այգւոյն արասցէ ի սեպհականութիւնէ իւրմէ, զորմէ կազմեցաւ ի կօնսիստորիին օրագիր, յ2 յուլիսի 1843 ամի և ըստ այնմ եղեալ է դաշն: Իսկ տունն տուեալ է Կարինեանցին ոչ 120 մանեթով, որպես գրէ պարոն Մատինովն, այլ 150 մանեթ յամենայն յայս այնչափ գնոյ, որչափ հատուցեալ է և նախկին բնակիչն ինմա, և ոչ որ աւելի քան զայն, չէ տուեալ երբէք:

Առ 23ն: Յաղագս այցելանելոյ ի վիճակս:

Եւ այս ևս սուտ է, ես յայցելեալ եմ համօրէն վիճակիս ի 1838 և 1839 ամս և ի 1841 ամի առաքեալ եմ զաւագ անդամ կօնսիստորիին զվարդապետն Գէորգ (որ այժմ է եպիսկոպոս) զոր և արարի ի վերայ հիման 64 յօդուածոյ, բարձրագոյն կամօք հաստատեալ կարգադրութիւն:

Առ 24ն: Վասն չտալոյ իմ զհաշիւ, յաղագս կառաւարութեան եկեղեցեաց:

Յամենայն ժամ ես զկնի յայցելութեանս տուեալ եմ ես զհաշիւ Սիւնհոդոսիդ և երջանկայիշատակ կաթուղիկոսին, և վասն 1842 ամի առաջի արարեալ եմ Սիւնհոդոսիդ յ9ի յուլիսի անցեալ ամի №120:

Առ 25ն: Վասն թշուառ վիճակի գործոց կօնսիստորիին, յորում գործք յնթացս 10ն ամաց ոչ ստանան զվախճան:

Եթէ այս ամբաստանութիւն էր ճշմարիտ, ունելով զցուցակ գործոց առ ինքն, վասն էր պ. Մատինովն ոչ նշանակեաց զոմանս ի նոցունց, որք ըստ

---

87 Բ մերձաւորութեան

բանից նորա ոչ ստանան զվախճան ի բազում ամս: Գոն գործ ոմանք սկսեալք ոչ ի բազմաց հետէ, որ մնան անվճիռ յաղագս չկատարելոյ ատենական տեղեաց զպահանջմունս կօնսիստորիին, ոչ հայեցեալ ի բազմադիմի (՞) կրկնողութիւնս: Օգտակարագոյն ևս լինէր, եթէ պ. Մատինովն փոխանակ շարադրելոյ զսուտ ամբաստանութիւնս ցուցցէր նման նախորդի իւրում զիւրն գործակցութիւն կօնսիստորիին: Վասն փութով վերջաւորելոյ զայնս ի ձեռն թղթակցութեանց[88] ընդ ում հարկն է, վասն անյապաղ բաւ առնելոյ պահանջմանց կօնսիստորիին:

Առ 26ն: Յաղագս կորուսանելոց զժամանակն բողոքանաց, առ որ բերէ յօրինակ զգործն Սարգիսեանց, ի մասին Բրգան վանաց եկեղեցւոյ:

Ահա միւս ևս յայտնի սուտ. ժամանակն վասն տալոյ զբողոքն նշանակեալ էր ի 20ն դեկտեմբերի և բողոքն տուեալ է ի ձեռն պատգամաւորի, ի հոգևոր կուսէ ի 10ն դեկտեմբերի: Իսկ բուրգն որպէս յառաջն նոյնպէս և այժմ է ընդ անդորր իշխանութեամբ եկեղեցայն:

Առ 27ն: Յաղագս ընտրելոյ իմ զանդամս անգրագէտս ըստ առանձին դիտաւորութեան:

Ընտրել զանդամս է իմ պարտաւորութիւն և ըստ այսմ հանդիսանան բարեբարոյութեամբ, բաւական ուսմամբ և ոմանք գիտութեամբ բազում լեզուաց:

Առ 28ն: Յաղագս առաջարկելոյ իմ հակառակ հրամանի Սիւնհոդոսին զանձինս անարժանս ի քահանայութիւն:

Այսմ պատասխանեալ եմ ի 13 յօդուածի: Այլ ընդ այսմ ևս յաւելեց, թէ պ. Մատինեանցն չէ ընկալեալ ի նկատողութիւն զի սուղ միջոցի բացումն աստ ճեմարանին, որ տես անկարացեալ է տալ զպտուղս ուսմանց, յորմէ զոյ ակնկալութեան, ուստի եթէ հեռանալ բոլորովին ի կարեկցութիւնք ընտրողութեան սրբազնագործ և ստորին եկեղեցական պաշտօնէից, յայնժամ մեծ մասն ժողովրդոց մնան բոլորովին առանց կատարման քրիստոնէական պարտաւորութեան, և այս առաւել վնասակար հետևանս կարէ ունիլ, քան թէ զձեռնադրելն զսակաւաւսումնս ի քահանայս:

Առ 29ն: Զայնմանէ, թէ ի լինիլն իմ յԱխլցխայ անդամ կօնսիստորիի, չէ թողեալ զինոյ զզոհս մինչև չէ ստացեալ զ 75 կոպեկն ի մատաղէ:

Զէ ուղիղ, զինումն մատաղաց թողեալ է ի կամս իւրաքանչիւրոց, իսկ անդամն նշանակի առ այն միայն վասն զառաջս ունելոյ և կարճելոյ զչարիս, որ կարին պատահել ի ժամանակի խուռն ընթացից ժողովրդոց յերկրպագութեան:

---

88 Բ թխթակցութեանց

Առ 30ն: Թույլ տուեալ իմ փախստական վարդապետի եկելոյ ի Կոստանդինուպօլսէ պատարագել յեկեղեցւոջ Բեդխեհիմու[89]:

Այս է յանդգնութիւն և սուտ, աստ եկեալ է ոչ փախստական, այլ վարդապետն Կարապետ ի միաբանութիւնէ Ղփչաղու վանաց վիճակին Ալէքսանդրօպօլու ի տեսութիւն ազգականաց, ընդ գրութեան յաջորդի տեղւոյն Նիկողայոս եպիսկոպոսի, և իբրև անձն սրբազնագործ մատոյց զպատարագ յաւուր սուրբ Յարութեան զատկի, վասն հաղորդութեան սրբազան խորհրդոյ, իսկ վասն չքոտի արդեանց ստացելոց նորա յեկեղեցւոջ, ո՛չ էր և ո՛չ գոյ հետախոյզ:

Առ 31ն: Յաղագս պսակման հարուստ ձկնավաճառ Մէլքօ Մէհրաբովի 70 ամաց ընդ անչափահաս աղջկան, զոր ես յանձնեալ եմ անդամոյ կօնսիստօրիի պսակել, վասն այն, թէ ծխատէր քահանայն ոչ համաձայնեցաւ առ այն: Ահա կատարեալ սուտ. փեսայացուն, եթէ ոչ սակաւ, սակայն և ոչ աւելի էր քան զ55 ամաց, իսկ աղջիկն 22 ամաց, զայս պսակ ոչ կատարեաց աւագ քահանայն Մէլքիսեդեկ, զի ժողովուրդ նորա տուեալ եղև այլում քահանայի, վասն զի նա արար զանչափ պահանջմունս հատուցանելոյ վասն կատարման պսակի, և թէպետ նախազգուշացուցի զնա ի ձեռն անդամոյ կօնսիստօրիի, զի զգուշասցի, այլ չկամեցաւ լսել զյորդորանս պատասխանելով, եթէ ոչ հատուցին նմա համաձայն նշանակման նորա, թո՛ղ ով և կամի պսակեսցէ, և թէպետ նա մնաց վասն այսպիսի յանցանաց առանց դատապարտութեան, այս եղև միմիայն ի յարգանս ծերութեան նորա, և ինքն իսկ Մէլքիսեդեկ աւագ քահանայն յանձն էառ զյանցանս իւր, և այս ապացուցանի այնու, զի նա չէ տուեալ ումեք զգանգատ, ո՛չ հանգուցեալ պատրիարգին, ո՛չ պրօկուրօրին և ո՛չ Սիւնհոդոսին:

Առ 32ն: Ի մասին պսակելոյ զաղջկունս 16 ամաց և տալոյ ծխատէր քահանայից, զվկայական չափահասութեան նոցա ըստ իմումս ստիպման:

Ի նոյն իսկ կարգի է, որ յայտնեալ է յ2 յօդուած իմում պատասխանւոյ ի մասին նախազգուշութեան անթոյլատրելի պսակաց, մեղադրութիւն պ. Մատինովի չունի և զսակաւ ինչ ճշմարտանմանութիւն, և զվկայութիւնս տան ոչ քահանայք, այլ ժողովուրդք ոչ պակաս յ12 անձանց:

Առ 33ն: Յաղագս չտալոյ աղքատաց զժողովեալ դրամս:

Առ այս պատասխանեալ եմ ի10 յօդուածի:

Առ 34ն: Յաղագս ժողովման դրամոց վասն շինութեան Յորդանանու աւելի քան զհարկաւորեալս առ այն:

---

89 Բ Բեդղիհիմու

Շինութիւն Յորդանանու արարեալ ի ձեռն երեցփոխանի վանքի[90] եկեղեցւոյ և ծախքն ընդ հաշուոյ առաջի արարելոյ, ի նմանէ լինին երբեմն աւելի և երբեմն սակաւ, այդ պատճառի յայնմանէ զի յայլ և այլ ամս հարկաւորի գնել զտախտակս վասն կամրջի յաղագս[91] անցանելոյ ընդ ջուրն, երբ յաւելանայք զսովորականն, ըստ չափու այսոցիկ ծախուց ժողովին, ի ձեռն երեցփոխանին դրամքն:

Առ 35ն: Յաղագս շինելոյ յիրաքանչիւր եկեղեցիս զերկուս աթոռս մէկն ութն մանէթի:

Ուղիղ է, աթոռքն շինեալ են ի գլխաւոր եկեղեցիս ընդ իմումս հրամանի, վասն այն զի ի գնալն իմ և արքեպիսկոպոսաց յեկեղեցիս, ոչ ժողովել զաթոռս ի տանց, որ բաց յանյարմարութիւնէ, ունիցի զտեսակ աղքատութեան, բոլորովին անպատշաճ, իսկ զգինս այնոցիկ ես համարիմ բաւական աժանագին: Զդրամս վասն այսոցիկ հատուցեալ են ոչ ես, այլ երեցփոխանքն: Դժուարին է հանոյանալ պ. Մատինեանին, ինքն իսկ ցուցանէ զանձն լինիլ ցանկացող բարեկարգութեան, ոչ համեմատելով նաև ընդ կարողութեան, իսկ զներկայ ծախս զոր պահանջէր անշուշտ հարկաւորութիւնն, գուն գործ է ցուցանել յորպիսի յանցաւոր եղանակի, չնկատելով, թէ այս գուն գործ էլ նորա շրջի, ի բամբասանս, բայց ես ոչ զարմանամ ընդ այս, զի որովհետև և ատելութիւնն խփէ զայս արդարութեան:

Առ 36ն: Յաղագս ժողովոյ վասն փախստական վարդապետի օսմանցւոց 4 ռուբլի յիւրաքանչիւր յեկեղեցւոյ:

Յաչս պ. Մատինովի իւրաքանչիւր վարդապետ, որ այց ելանէ վանական եղբարց իւրոց, է թափառական, զայս իսկ անպատշաճ կոչումն տայ նաև վարդապետին Միքայէլի, եկելոյ ի Վանից Լիբանանու հռովմէական դաւանութեան, ընդ վկայականաց արքեպիսկոպոսաց եղելոց ի Տաճկաստան, նա գնացեալ է յէջմիածին և յայլ վանօրայս և ես ըստ յանձնարարութեան արժանայիշատակ պատրիարգին ժողովեցի վասն նորա ի գլխաւոր եկեղեցեացն չորս չորս[92] մանէթս:

Առ37ն: Յաղագս հրամայելոյ իմ երիցփոխանաց զի հաշուեմատեանս տացեն արտագրել Ախալցխեցի տիրացու Դաւթի հատուցմամբ զտասն տասն մանէթն: Հաշիւն առաջի արարեալք յերիցփոխանաց պահպանին ի Կոնսիստորիին, որք և կարեն լինիլ ապացոյց, թէ յումմէ են արտագրեալք, իսկ

90 Բ վանաց
91 Բ յաղակս
92 Բ 4 չորս

թէ ում են տուեալ երիցփոխանմն, որ չգիտեն զհայոց գիր արտագրել զայնս նոցա է յայտնի և սեպհականապէս կախի զնոցունց պարապեցուցանել վասն այն զո՛վ և հաճեսցին[93], նմանապէս և հատուցանել արտագրողաց, որման նոքա կամեցեալ են նոցային, իսկ յայտնի յաղբերաց, իսկ զհրամանն զոր ասէ Մատինովն, չեմ տուեալ ես:

Առ 38ն: Յաղագս պահանջելոյ իմ յիրաւանչիւր պսակէ ի 20 կոպեկէ ց 1 ռուբլի արծաթոյ՝ չհայելով ի հարստութիւն իմ:

Պահանջումն ի պսակաց չէ յինէն եղեալ, այլ հիմնեալ է ի վերայ սովորութեան եղելոյ ի հին ժամանակաց: Ոչ վատ լինէր պարոն Մատինովին, որ ինն զայսման չիոտի արդիւնս, գիտել և զայն, որման որբ և աղքատ ողջոյն ընտանեօք ստանան զապրուստ յարդեանց իմոց, թուել զայս օժանդակութիւնս արարեալս յինէն վասն Քրիստոսի, այժմ չէ անդէպ, այլ տամ նկատողութիւն պ. Մատինովին, եթէ նա միտ դնէր այսմ որպէս պարտն էր, թէ որպէս ի գործածեմ զհարստութիւն իմ, յայնժամ տեսանէր, թէ աստ զգացմունք նախանձու անտեղի է, այնու առաւել, թէ հարստութիւն իմ բաղկացեալ է ի մաքուր դրոց ժողովրդոց, որ ճանաչեն զաշխատանս իմ յօգուտ նոցա:

Առ 39ն: Յաղագս հասուցանելոյ առ իս զմատաղս յեկեղեցեաց և չգրելոյ յարդիւնս:

Յորէ անտի մտանելոյ արդեանց վիճակիս ի կօնսիստորիայն առ իս չիք հասեալ կենդանի մատաղք, այլ բազումք գիտելով, թէ որման որբք կերակրին յարքեպիսկոպոսարանի, առաքեն վասն նոցա և վասն վանից զմի մասն ի մսոյ մատաղաց: Առարկայք նշանակեալք ի ներկայ և ի նախընթաց յօդուածս, ծառային աւելի այլոց ամբաստանութեանց պ. Մատինովի, իսկական գրգռմամբ, որ ի ձեռն նորա կառավարեցան, ոչ զգացողութիւնք բարեդիտաւորութեան, այլ զգացմունք սաստիկ թշնամութեան և նախանձու ընդ իս: Այսոքիկ անմաքուր ստիպմունք հասուցին զնա ի կատարեալ մոռացօնս ի մասին ամենայն անյարմարաւորութեան[94] և բարեդիտողութեան: Զցանկութեան վրեժխնդրութիւնն յայտնի ցուցանէ յամենայն բառս իւր, որ հային ի վշտացուցանել զիս:

Առ 40ն: Յաղագս խլելոյ զայրին Ադամայ յաւագ քահանայէ Սահարունոյ և յանձնելոյ Յարութիւն քահանայի պսակել զնա ի թիւս տէրունեաց և այլն:

Ստոյգ է, զայրին Ադամայ ամուսնացեալ ընդ աստիճանաւորի ես յանձնեցի Յարութիւն քահանայի պսակել ի թիւս տէրունեաց, վասն զի այն երկ-

---

93 Բ հաչեսցին

94 Բ յարմարաւորութեան

ռորդ այր նորա է ի ծխոց Յարութիւն քահանայի, ուրեմն և կինն պարտ է հեւիլ առն, նաև այն աստիճանաւոր էր խոստովանաւորդի տէր Յարութիւնի և ցանկացաւ պսակիլ ի ձեռն նորա: Ուրեմն զոր արգելանս գտանէ յայսմ պ. Մատինեանցն, որ մեղադրէ զիս յայսմ առիթ, կարէ վճռել միմիայն նա իսկ Մատինովն: Եւս սակաւագոյն կարէ մեղադրել զիս յայնմ, թէ ես աշխատիմ բազմացուցանել զթիւ տէրունեաց՝ թուելով զերկու մասն յարդեանց նոցա ընդ վիճակային արդիւնց, առանց այնր իւ, ապա պահպանեցին Կօնսիստորիայն, հոգևոր կառաւարութիւնք, հոգևոր դպրոցք, վանօրայք և արքեպիսկոպոսարանք, ուրեմն զայս պարտ էր գիտել պ. Մատինովի, նմանապէս և զայն, թէ զայլ աղբիւրս չունի այս վիճակ:

Առ 41ն: Բաց ի բազում ժողովրդավարութեան յոգուտ աղքատաց, յեկեղեցիս արարեալ լինին ի կրպակս և ի փողոցս ի ձեռն քահանայից:

Թէև այս լինիցէր ուղիղ, յայնժամ ևս չիք տեղի կշտամբանաց: Ամենայն աղբիւր ժողովարարութեան վասն աղքատաց միայն եթէ իցէ այս բարեյոժար, է գործ սուրբ: Այլ բացարձակ ասեմ, զի միայն մի անգամ լինի յամենայն ժողովարարութիւն ի կրպակս և ի փողոցս ոչ յոգուտ աղքատաց, այլ վասն մոմոյ[95] յաղագս լուսաւորութեան սեղանոյ Սրբոյ Էջմիածնի ըստ սովորութեան եղելոյ ի հնուստ: Առ այսպիսի տուրս նուիրողքն ոչ միայն չցուցանեն զանբաւականութիւն որպէս նկարագրէ Մատինովն, այլ տան զնուէր ամենայն պատրաստութեամբ և ուրախութեամբ, իբրև զհոգեկան պարտս:

Առ 42ն: Յաղագս յանձնելոյ երկուց քահանայից Թէլաւու զերկուս տունս ի գեղջն Շալաւուր:

Մերձ Թէլաւու ի գիւղն Շալաւուր բնակին 4 տուն հայք և որպէս երևի ի շտատէն ընդ այլ երից սակաւաբնակ գիւղօրէից յանձնեալ են հովուութիւն քահանայից Թէլաւու Սուրբ Գէորգ եկեղեցւոյ և քահանայքդ այդոքիկ հերթակալութեամբ գնան յասացեալ յաւանն վասն կատարելոյ զհոգեկան պէտս, ուրեմն աստ չիք ինչ անպատշաճութիւն և ինքնակամ ներգործութիւն իմ, որպէս երևակայէ պ. Մատինովն, որ պատրաստ է միշտ և յամէնուրէք զրպարտել զիս:

Առ 43ն: Յաղագս երկիւղի յեկեղեցիս ի պատճառս կարգելոց իմ զժամկոչս և տիրացուս ի փախստականաց:

Այս յօդուած ամբաստանութեան բացատրեալ է իսկապէս թիւր միտս, վասն զի պարոն Մատինովն կամի հաստատել յիմ վերայ զայն, զոր ես արմատախիլ արարեալ եմ, յապացուցութիւն այսր է՝ տնօրէնութիւն վիճակային

[95] Բ մասանց

իշխանութեան 6ն օգոստոսի[96] 1843 ամի: Երբ եկաւ ի տեղեկութիւն ատենին, թէ աւագ քահանայք և երիցփոխանք յոմանս եկեղեցիս կարգին զժամկոչս[97] յանծանօթ ու յանգէտ անձանց, յայնժամ հրամայեցաւ բարեկարգչին՝ պարտաւորել ձեռագրաւ զաւագ քահանայս և զերիցփոխանս անյապաղ և անպատճառ արձակել զամենայն անծանօթ ժամկոչս և ի տեղիս նոցա կարգել զհաւատարիմ արս, երկիւղիւ սաստիկ պահանջողութեան, ի դէպս որպէսզի և իցէ վնասակար անցից վասն բարեկարգութեան եկեղեցեաց: Իսկ անծանօթ տիրացում ամենևին ո՛չ գոն:

Առ 44ն: Յաղագս վարձատրելոյ զոմանս ի քահանայից առանց գիտութեան պատրիարգին և Սիւնհոդոսին:

Այսմ պատասխանեալ եմ արդէն ի 14 յօդուածի:

Առ 45ն: Յաղագս չպատրաստելոյ իմ զոչ մին ի սրբազնագործութիւն և նեղելոյ իմ զուսումնականս:

Ոչ հայելով ի փոքր միջոցի՝ բացեալ հոգևոր դպրոցն և ի սակաւաքանակ միջոցս նորա բաւականաչափ կրթեալ են ի ծառայութիւն տաճարին, և ըստ բարեբարոյութեան և ըստ ուսման և բազումք աւարտեալք զընթացս[98] ուսման մտին ի քաղաքական ծառայութիւն և յարքունի ուսումնարանս: Յայնմ թուոյ[99] են բոլոր գրագիրք Կոնսիստորիին և հոգևոր կառաւարութեանց: Նախանձաւորութիւնն իմ ի տարածել զլուսաւորութիւն քաջ յայտնի է նոյնիսկ ատենակալաց Սիւնհոդոսիդ, և այսմ ապացոյց են գործք իմ բացայայտեալք յ1 յօդուածի, որք բաւական են գոնէ այնմ, զի ես կանգնեցայց ի դատաստանի, ի վեր, քան զՄատինովն: Զուսեալ քահանայս ոչ միայն չնեղիմ, այլ պատուիմ ճշմարիտ յարգանօք՝ ապացուցանելով զայս ի նոյն իսկ գործում, այլ մի միայն ուսումն առանց ամենաճիշտ բարեբարոյութեան, ոչ ուրէք չէ բաւական ևս առաւել ի ծառայութեան սրբոյ տաճարին: Այսպէս, զո՞վ բնաւորութիւն աւագ քահանային Սահառունւոյ բոլորովին ոչ համապատասխանէ ուսման նորա, այլ այնուամենայնիւ ես ոչ նեղիմ զնա, ոչ ինչ իւիք, միայն թողեալ եմ զնա առանց պաշտօնի, զոր նա միշտ պատրաստ է ի կիրածել առ չարութիւնն և այս աւագ քահանայ նիւթելով ընդ իս զատելութիւն՝ է գլխաւոր աղբիւր պ. Մատինովայ վասն անհիմն ամբաստանութեանց զինէն: Ինքնին Սիւնհոդոսն ճանաչէ զայն աւագ քահանայ յաւուրս լինելոյ նորա ատենադպիր յայնցեալ հոգևոր կառաւարութեան, ևս առաւել նա հրատարակեաց

---

96 Բ յոգոստոսի
97 Բ զժամանակս
98 Բ զնթացս
99 Բ թվոյ

զիւրն ամբարշտութիւն մինչ կարգեալ էր ուսուցիչ և վերատեսուչ ճեմարանին էջմիածնի, ուստի արժանայիշատակ կաթուղիկոսն արտաքսեաց զնա անպատուութեամբ՝ իբրև զանարժան և վնասակար անձն:

Առ 46ն: Յաղագս տրտնջելոյ զինէն բոլոր հասարակութեան:

Ես չեմ տուեալ զփոխրագոյն ինչ առիթ տրտնջելոյ հասարակութեան զինէն, և՛ տեսանեմ, և՛ զգամ ըստ յարակցութիւնց նորա առ իս բոլորովին է ընդդէմ: Այս է ըստ ամենայնի ընդունայն որպէս և բոլոր ամբաստանութիւնն է նկարագրութիւն պ. Մատինովի, այլ եթէ նա կամ Սահառունին և նմանք նոցա տրտնջին զինէն, չէ այս ձայն ողջոյն հասարակութեան, որ եթէ ունէր զինէն առիթ անբաւականութեան, իհարկէ առանց օգնականութեան Մատինովի, կարէր բողոքել ի Սիւնհոդոսն, քանզի ոչինչ և ոչ ոք կարէ նեղել զազատութիւն նորա:

Ի վախճան այսր պատասխանւոյ իմոյ՝ ես խոնարհաբար խնդրեմ հասուցանել ի ծանօթութիւն տ:՞ տ:՞ նախարարին ներքին գործոց և գլխաւոր կառաւարչին Վրաստանի, քանզի պ. Մատինովն և առ նոսա առաքեալ է զնմանօրինակ ամբաստանութիւնս[100] զինէն, որպէս և ի Սիւնհոդոսդն, նմանապէս խնդրեմ և ի պաշտպանել զիս յապագայն[101] ի ցաւեցուցանելոյ[102] պ. Մատինովի:

Թեմական արքեպիսկոպոս հայոց Վրաստանի և գաղթելոց ի Տայս՝ Կարապետ:

N37: ի 22ն յունվարի, 1844 ամի, ի Տփխիս[103]:

[100] Բ ամբարտանութիւնս
[101] Բ յապակայն
[102] Բ յամեցուցանելոյ
[103] Բ Թփխիս

GOHAR GEVORGYAN

THE ACTIVITIES OF THE PRIMATE OF THE DIOCESE OF THE ARMENIAN CHURCH IN GEORGIA ARCHBISHOP KARAPET BAGRATUNI IN THE CONTEXT OF HIS STATEMENT ADDRESSED TO THE SYNOD OF ECHMIADZIN

Keywords: Diocese of the Armenian Apostolic Church of Georgia, Archbishop Karapet Bagratuni, Diocesan Primate, Matenadaran Archive (Alexander Yeritsyan's fund), National Archive of Armenia, synod of Echmiadzin, statement, Karin.

Archbishop Karapet Bagratuni is one of the spiritual figures who has truly left a great mark on the history of the Armenian Diocese of Georgia. His role and efforts in improving the educational, cultural and social life of the Georgian-Armenian people are undeniable, despite the disagreements, criticisms and accusations of his activities. My study is based on numerous documents from the National Archive of Armenia, the Alexander Yeritsyan Fund in the Matenadaran Archives and other written sources related to the activities of Archbishop Karapet Bagratuni. I have prepared for publication a remarkable document, in which Archbishop Karapet, refuting the accusations made by Chief Prosecutor Matinov, presents his dedicated activities directed towards the welfare of the Armenian Church and people.

The study of the statement provides an opportunity to talk about a prolific Armenian spiritual figure who, during the 20 years of his leadership, greatly reformed and improved the spiritual, economic, social, and especially educational and cultural life of the Georgian-Armenian people, and also established close relations with the state and spiritual authorities of Georgia and Russia. The events discussed in this document provide the best characteristic of the spiritual life of Armenians in that period, as well as the relations with the local and central administrations.

ГОАР ГЕВОРГЯН

ДЕЯТЕЛЬНОСТЬ ПРЕДВОДИТЕЛЯ АРМЯНСКОЙ ЕПАРХИИ В ГРУЗИИ АРХИЕПИСКОПА КАРАПЕТА БАГРАТУНИ В КОНТЕКСТЕ АДРЕСОВАННОГО СИНОДУ ЭЧМИАДЗИНА ЗАЯВЛЕНИЯ

Ключевые слава: Армянская епархия Грузии, архиепископ Карапет Багратуни, предводитель епархии, архив Матенадарана, архив Александра Ерицяна, Национальный архив Армении, Эчмиадзинский синод, Карин.

Архиепископ Карапет Багратуни – один из духовных деятелей, оставивших заметный след в истории армянской епархии Грузии. Несмотря на разногласия, критику и обвинения в его адрес, его роль и усилия, вложенные в улучшение образовательной, культурной и социально-экономической жизни армян Грузии, неоспоримы. Основой для нашего исследования послужили многочисленные документы, хранящиеся в Национальном архиве Армении и архиве Матенадарана (фонд Александра Ерицяна). Мы подготовили к публикации документ, в котором, в опровержение обвинений старшего прокурора Матинова, архиепископ Карапет представляет свою самоотверженную деятельность, направленную на благосостояние Армянской Церкви и армянского народа.

Изучение документа дает возможность говорить о духовном деятеле, который за 20 лет своего руководства значительно реформировал и улучшил духовную, экономическую, социальную и особенно образовательную и культурную жизнь армян, сформировал прочные связи с государственными и духовными властями Грузии и России.

События, о которых идет речь в документе, наилучшим образом характеризуют духовную жизнь армян того периода, а также их отношения с местной и центральной администрацией.